ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**16 մարտի 2018 թվականի N Մ- 221 - Ա**

**քաղ. Երևան**

## «ՖՈՔԸՍ ՕՆ ՉԻԼԴՐԵՆ ՆԱՈՒ, ԻՆԿ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 12-ի N 01.1/14-2/4213-18, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սցիալական հարցերի նախարարության 2018 թվականի մարտի 14-ի N ԱՊ/ԱնՄ-2-1/2583-18, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2018 թվականի մարտի 14-ի N ՆՁ/22.2/2807-18 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մարտի 14-ի N 06/3-8/11975-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Focus on Children Now (FCN)» հիմնադրամի կողմից «Ֆոքըս օն չիլդրեն նաու, ինկ» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռի (534 տեղ, 10840 կգ ընդհանուր քաշով, 159,046 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 6,867.88 ԱՄՆ-ի դոլար, բեռի և բաշխման ցանկերը կցվում են, «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. «Ֆոքըս օն չիլդրեն նաու, ինկ» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն հանձնելու վերաբերյալ:

3. Սույն որոշումն ուղարկել Արցախի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին, Հայաստանի Հանրապետության Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու և Սյունիքի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

" Ֆոքըս օն չիլդրեն նաու,ինկ." ԲԿ Հայաստանյան մասնաճյուղի անունով Focus on Children Now (FCN) հիմնադրամի կողմից ," Վիժն Մեդիա Մենեջմենտ " միջոցով ուղարկված 534 տեղ , 10840 կգ բրուտտո քաշով և 159.046 ԱՄՆ դոլար արժողությամբ (որից ճանապարհածախսը 6867.88 ԱՄՆ դոլար) բեռի բաշխման

ՑԱՆԿ

| # | ապրանքի անվանում | տեղ | հատ | արժեք $ | քաշ բրուտտո կգ |
|---|---|---|---|---|---|
| 1 | ծածկոց նոր | 10 | 182 | 1700 | 149.000 |
| 2 | բազմոցի բարձի երես նոր | 7 | 338 | 1700.00 | 152.000 |
| 3 | վարագույրներ նոր | 5 | 362 | 1900.00 | 90.000 |
| 4 | սփրոց նոր | 3 | 145 | 530.00 | 75.000 |
| 5 | բրդյա ծածկոց օգտ | 4 | 96 | 825.00 | 90.000 |
| 6 | ծածկոց սինտետիկ օգտ | 8 | 384 | 1640.00 | 230.000 |
| 7 | հագուստ օգտ. (մեծահասակների) | 245 | 21861 | 95642.00 | 6806.800 |
| 8 | հագուստ նոր մանկական | 37 | 9864 | 18300 | 728.100 |
| 9 | գրքեր մանկական էնցիկլոպեդիա օգտ.. | 1 | 136 | 130 | 19.800 |
| 10 | պայուսակ օգտ. | 9 | 431 | 1745 | 145.800 |
| 11 | գլխարկներ նոր | 1 | 63 | 120 | 14.850 |
| 12 | կտորեղեն(լոսկուտներ) նոր | 6 | 524 | 1790 | 121.950 |
| 13 | կոշիկ կանացի նոր(զույգ)(արհ.կաշվից) | 3 | 109 | 735 | 39.600 |
| 14 | մանկական սայլակներ նոր | 4 | 16 | 320 | 59.400 |
| 15 | խաղալիքներ նոր | 6 | 221 | 680 | 58.500 |
| 16 | տակդիր | 97 | 10431 | 9418 | 649.800 |
| 17 | գուլպա նոր | 39 | 3534 | 12225 | 756.000 |
| 18 | հաշվանդամի քայլակ օգտ. | 5 | 5 | 665 | 27.900 |
| 19 | հաշվանդամի հենակ օգտ. | 2 | 6 | 330 | 9.900 |
| 20 | հաշվանդամի սայլակ օգտ. | 2 | 2 | 699 | 22.500 |
| 21 | դպրոցական տետրակներ նոր | 9 | 744 | 744 | 147.150 |
| 22 | պայուսակ դպրոցական նոր | 9 | 176 | 1075 | 127.800 |
| 23 | պայուսակ նոր | 2 | 29 | 215 | 20.700 |
| 24 | մեքենայի դիմապակի | 1 | 1 | 350 | 20.250 |
| 25 | խոհանոցի գոգնոց նոր | 5 | 1345 | 1593 | 95.850 |
| 26 | թելեր նոր | 3 | 274 | 570 | 38.700 |
| 27 | ծածկոցներ մանկական նոր | 3 | 433 | 1335 | 48.150 |
| 28 | սպորտային ներքնազգեստ նոր | 1 | 120 | 1000 | 10.350 |
| 29 | նորածնի գոգնոց նոր | 1 | 402 | 400 | 27.900 |
| 30 | վարսակալներ նոր | 3 | 320 | 320 | 12.150 |
| 31 | բիժուտերիա | 3 | 844 | 350 | 44.100 |
| | | 534 | | 159,046.00 | 10,840.000 |

Հայաստանյան մասնաճյուղ Armenian branch 00130776

°Ֆոքըս օն չիլդրեն նաու,ինկ.° ԲԿ կողմից հատկացվող ապրանքներ կազմակերպություններին ներառյալ ճանապարածախսը

ք.Գավառ,"Բարի Հույս "հաշմանդամ երեխաներին աջակցող ՀԿ

| ապրանքի անվանում | առժեք $ | քանակ |
| --- | --- | --- |
| հագուստ օգտ. (մեծահասակների) | 3,779 | 10 արկղ |
| տակդիր | 626 | 7 արկղ |

4,404.62

Ք.Գորիս ՛Գործըկերություն և ուսուցում°ՀԿ

| ապրանքի անվանում | առժեք $ | քանակ |
| --- | --- | --- |
| հագուստ օգտ. (մեծահասակների) | 4,264 | 10 արկղ |
| պայուսակ օգտ. | 248 | 1 արկղ |
| խոհանոցի զոգնոց նոր | 312.86 | 1 արկղ |

4,824.32

Հայ առաքելական եկեղեցու Շիրակի թեմի Սոցիալ-Կրթական կենտրոն ք.Գյումրի

| ապրանքի անվանում | առժեք $ | քանակ |
| --- | --- | --- |
| հագուստ օգտ. (մեծահասակների) | 5,525 | 14 արկղ |
| պայուսակ օգտ. | 193 | 1 արկղ |
| խոհանոցի զոգնոց նոր | 301 | 1 արկղ |
| կտորեղեն(լոսկուտներ) նոր | 766 | 2 արկղ |
| տակդիր | 629 | 7 արկղ |
| գրքեր մանկական էնցիկլոպեդիա օգտ.. | 143 | 136 հատ |

7,556.36

Խարբերդի հատուկ դպրոց ՊՈԱԿ

| ապրանքի անվանում | առժեք $ | քանակ |
| --- | --- | --- |
| հաշմանդամի հենակ | 356 | 6 հատ |
| հաշմանդամի սայլակ օգտ. | 725 | 2 հատ |
| հաշմանդամի քայլակ | 489 | 3 հատ |
| տակդիր մեծահասակների | 3,760 | 30 արկղ |

5,328.82

Գ.Մելիքյանի Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ

| ապրանքի անվանում | առժեք $ | քանակ |
| --- | --- | --- |
| հագուստ օգտ. (մեծահասակների) | 43,916 | 110 արկղ |
| ծածկոց սինտետիկ օգտ | 501 | 4 արկղ |
| պայուսակ օգտ. | 566 | 2 արկղ |
| մեքենայի դիմապակի | 363 | 1 հատ |

45,345.18

"Ֆոքըս օն չիլդրեն նաու,ինկ." ԲԿ Հայաստանյան մասնաճյուղ

| ապրանքի անվանում | առժեք $ | քանակ |
| --- | --- | --- |
| ծածկոց նոր | 1,790 | 7 արկղ |
| բազմոցի բարձի երես նոր | 1,765 | 5 արկղ |
| վարագույրներ նոր | 1,939 | 3 արկղ |
| սփռոց նոր | 581 | 4 արկղ |
| բրդյա ծածկոց օգտ | 877 | 4 արկղ |
| ծածկոց սինտետիկ օգտ | 1,254 | 5 արկղ |
| հագուստ օգտ. (մեծահասակների) | 22,141.92 | 55 արկղ |
| հագուստ նոր մանկական | 19,189 | 38 արկղ |
| ծածկոցներ մանկական նոր | 1,374 | 3 արկղ |
| կոշիկ կանացի նոր(զույգ)(արհ.կաշվից) | 774 | 3 արկղ |
| կտորեղեն(լոսկուտներ) նոր | 313 | 1 արկղ |
| վարսակալներ նոր | 359 | 3 արկղ |
| գլխարկներ նոր | 133 | 1 արկղ |
| մանկական սայլակներ նոր | 371 | 4 արկղ |
| խաղալիքներ նոր | 744 | 5 արկղ |
| տակդիր | 3,752 | 32 արկղ |
| գուլպա նոր | 12,727 | 39 արկղ |
| պայուսակ դպրոցական նոր | 1,191 | 9 արկղ |
| խոհանոցի զոգնոց նոր | 781 | 2 արկղ |
| պայուսակ նոր | 872 | 6 արկղ |
| բիժուտերիա նոր | 389 | 3 արկղ |
| սպորտային ներքնազգեստ նոր | 1,013 | 120 հատ |
| դպրոցական տետրակներ | 860 | 744 հատ |
| հաշմանդամի քայլակ օգտ. | 241 | 2 հատ |

75,427.94

Հայաստանյան մասնաճյուղ
Armenian branch
00130776

02508251

ՀԱԼԷՊ ՀԲՀԿ

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| հագուստ օգտ. (մեծահասակների) | 4,074 | 10 արկղ |

4073.60

ԱՍ ՀԿ Արմավիր մրզ

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| խոհանոցի զոգնոց նոր | 263 | 1 արկղ |
| պայուսակ նոր | 223 | 1 արկղ |
| հագուստ օգտ. (մեծահասակների) | 10743 | 25 արկղ |
| կտորեղեն(լոսկուտներ) նոր | 263 | 1 արկղ |
| տակդիր | 891 | 9 արկղ |

12381.82

ք.Երևան ՛՛Փրկություն՛՛ հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն ԲՀԿ

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| տակդիր | 1,008 | 864 հատ |

1,008.32

[redacted]

ք. Վանաձոր, Օրրան կենտրոն

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| հագուստ օգտ. (մեծահասակների) | 4,428.6 | 10 արկղ |
| կտորեղեն(լոսկուտներ) նոր | 525.7 | 2 արկղ |
| թելեր | 608.6 | 3 արկղ |

5,562.90






**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**4 ապրիլի 2018 թվականի N Մ - 222 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի N Մ-1469-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2018 թվականի մարտ 30-ի որոշման նախագծի համաձայնեցման թերթը,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 13-ի «Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից 2016-2021 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-1469-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Յուքոմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2018 թվականի փետրվարի 2-ին կնքված N3782704 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2018 թվականի ապրիլի 1-ից շարժական կապի և ինտերնետի ծառայությունների մատուցում՝ ամսեկան 370,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Վեոն Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2017 թվականի հոկտեմբերի 17-ին կնքված N 119914016 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2018 թվականի ապրիլի 1-ից շարժական և ֆիքսված կապի, ինչպես նաև ինտերնետ ծառայությունների մատուցում՝ ամսեկան 350,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի. :

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**4 ապրիլի 2018 թվականի N Մ - 223 - Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 23-Ի N Մ- 259 -Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
**(«Առողջ կյանքի ուղի»)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2018 թվականի մարտ 30-ի որոշման նախագծի համաձայնեցման թերթը,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Գերմանիայի Դաշնությունից «Առողջ կյանքի ուղի» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից ձեռք բերված բեռի (4 տեղ, 145 կգ ընդհանուր քաշով, 28,209 եվրո արժողությամբ, իսկ փոխադրման ծախսերը կազմում են 330 եվրոի համարժեք դրամ, «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի ապրիլի 23-ի «Առողջ կյանքի ուղի» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Բժշկական կենտրոնի կառուցում» ծրագրի մասին» N Մ-259-Ա որոշմամբ (2009 թվականի դեկտեմբերի 11-ի N Մ-820-Ա, 2013 թվականի հունիսի 7-ի N Մ-481-Ա, 2015 թվականի հունվարի 30-ի N Մ-092-Ա, 2017 թվականի ապրիլի 27-ի N Մ-350-Ա և 2018 թվականի մարտի 17-ի N Մ-187-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**5 ապրիլի 2018 թվականի N Մ-224-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N Մ-510-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2018 թվականի ապրիլի 3-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից Երևանի քաղաքային համայնքի համար ձեռք բերված մանկական խաղահրապարակների խաղասարքերը և մարզասարքերը (658 տեղ, 20,120 կգ ընդհանուր քաշով, 170,805 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 12,260 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՄՎ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 10-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում» ծրագրի մասին» N Մ-510-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 ապրիլի 2018 թվականի N Մ-225-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N Մ-510-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2018 թվականի մարտի 21-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից Երևանի քաղաքային համայնքի համար ձեռք բերված ծաղկասածիլները (15 տեղ, 7,115 կգ ընդհանուր քաշով, 113,874.36 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 3,456,800 դրամ, «Արարատյան» ՄՎ), և տնկիները (4,220 տեղ, 17,130 կգ ընդհանուր քաշով, 29,000,000 դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման և այլ ծախսերը, «Արարատյան» ՄՎ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 10-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում» ծրագրի մասին» N Մ-510-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**6 ապրիլի 2018 թվականի N Մ- 226 - Ա**
**քաղ. Երևան**

**«ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ՀԱՅ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ (ՍՈԱՐ)-ՀԱՅԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԽԱՐԲԵՐԴԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՄԱՆԿԱՏՈՒՆ» ՊՈԱԿ-Ի ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 30-ի N 01.1/14-2/5855-18, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2018 թվականի մարտի 29-ի N 02/14/52363-18, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2018 թվականի ապրիլի 3-ի ԱՊ/ԱնՄ-2-1/3418-18 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 3-ի N 06/3-8/16249-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (ՍՈԱՐ)-Հայաստան» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Բաղրամյան 58, բն. 1, ՀՎՀՀ՝ 00148272) իրականացվող՝ 10,000,000 դրամ արժողությամբ «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի մասնակի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (ՍՈԱՐ)-Հայաստան» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՎԱՐԴԻՈՆ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00856513) 2018 թվականի մարտի 5-ին կնքված N Վ/01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մասնակի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 10,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Առաջարկել «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (ՍՈԱՐ)-Հայաստան» բարեգործական հիմնադրամին սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (ԾՕԱՄ)-Հայաստան»

Բարեգործական հիմնադրամի գործադիր

տնօրեն Հ.Մուրադյանի կողմից

23 մարտի 2018

# ԾՐԱԳԻՐ

## «ԽԱՐԲԵՐԴԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՄԱՆԿԱՏՈՒՆ» Պետական Ոչ Առևտրային Կազմակերպություն (ՊՈԱԿ)-ում մասնակի վերանորոգում

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Խարբերդի Մասնագիտացված Մանկատուն» ՊՈԱԿ-ում Նորոգել ննջասենյակը, խաղասենյակը,գրադարանը,լոգուպեղի և պատվաստումների սենյակները: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | ԱՄՆ-ի «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն» (ԾՕԱՄ) հիմնադրամ 400, Կինգ օֆ Պրուսիա, Փենսիլվանիա, 19406, ԱՄՆ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (ԾՕԱՄ)-Հայաստան» բարեգործական հիմնադրամ (ք. Երևան, Թբիլիսյան խճ. 19, հեռ 098 23 25 18) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստան, , 0817, Արարատի մարզ, Նոր Խարբերդ համայնք Բաղրամյան փող., 58 շենք Բնագավառ-Սոցիալական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 10 000 000 (տասը միլիոն) ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Խարբերդի Մասնագիտացված Մանկատուն» ՊՈԱԿ |
| 8. | Ծրագրի իրակնացման տևողությունը | 2018 թվականի մարտի 25-ից մինչև 2018 թվականի հունիսի 30-ը |



| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | «Խարբերդի Մասնագիտացված Մանկատուն» ՊՈԱԿ-ում մասնակի վերանորոգման աշխատանքներ իրականացնելով Նորոգել ննջասենյակը խաղասենյակը, գրադարանը, լոգուպեղի և պատվաստումների սենյակները: Բյուջեն կազմում է 10 000 000 (տասը միլիոն) ՀՀ դրամ: Ժամկետները, 2018 թվականի մարտի 25-ից մինչև 2018 թվականի հունիսի 30-ը |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Խարբերդի Մասնագիտացված Մանկատուն» ՊՈԱԿ-ում Նորոգել ննջասենյակը, խաղասենյակը, գրադարանը, լոգուպեղի և պատվաստումների սենյակները: 10 000 000 (տասը միլիոն) ՀՀ դրամ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցություն պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում հիմնադրամը համագործակցում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և տեղական ինքնակառավարման մարմինների հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է բարեգործի կողմից, ինչպես նաև սահմանված կարգով ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին կներկայացվի հաշվետվություն |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**6 ապրիլի 2018 թվականի N Մ- 227 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՇԵՆԱՑՆԵՆՔ ՄԵՐ ԳՅՈՒՂԸ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՆՎՏԱՆԳ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ ԳՅՈՒՂԱԲՆԱԿ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 30-ի N 01.1/14-2/5851-18, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2018 թվականի մարտի 30-ի N 02/14/52447-18, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2018 թվականի մարտի 29-ի N ԱՊ/ԱնՄ-2-1/3302-18 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 29-ի N 06/3-8/15731-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Շենացնենք մեր գյուղը» հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ Կոտայքի մարզ, գյուղ Արգել, Օղակաձև 17, ՀՎՀՀ՝ 03309307) իրականացվող՝ 21,488,640 դրամ արժողությամբ «Անվտանգ խաղահրապարակներ գյուղաբնակ երեխաների համար» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Շենացնենք մեր գյուղը» հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ԳՐԱՖԵՆ-ՇԻՆ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00126761) 2017 թվականի մարտի 6-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 400 քառ/մ մակերեսով 7 սմ հաստությամբ բետոնային շերտի և 10 մմ հաստությամբ ռետինային ծածկույթի աշխատանքների կատարում՝ 7,680,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Մագնոն» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05501766) 2018 թվականի մարտի 12-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է խաղահրապարակի սարքավորումների պատրաստում՝ 13,213,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Աուդիտ սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00419022) 2018 թվականի մարտի 5-ին կնքված N AS-40/18 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ավարտական հաշվետվության աուդիտի անցկացում և եզրակացության պատրաստում հայերեն և անգլերեն լեզուներով՝ 576,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Շենացնենք մեր գյուղը» հասարակական կազմակերպությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի իրականացման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Կոտայքի և Լոռու մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Շենացնենք մեր գյուղը» կազմակերպության
Նախագահ Անահիտ Ծովմասյանի կողմից
«15» մարտի 2018 թ.

«Անվտանգ խաղահրապարակներ գյուղաբնակ երեխաների համար» ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է՝ միջազգային ստանդարտներին համապատասխան խաղահրապարակների ներդրման միջոցով ապահովել երեխաների հարմարավետ և անվտանգ ժամանցը՝ Կոտայքի և Լոռու մարզերում |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանատուն<br>Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 23/4<br>Հեռախոս՝ (+374 60) 52 10 30<br>Էլ. հասցե՝ embjp@yv.mofa.go.jp |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Շենացնենք մեր գյուղը» հասարակական կազմակերպություն<br>Հասցեն:՝ՀՀ Կոտայքի մարզ, գյուղ Արգել Օղկաձև 17 ,<br>ՀՎՀՀ 03309307 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Կոտայքի մարզի Կամարիս , Քասախ , Զովունի ,Բջնի գյուղական համայնքներ և Լոռու մարզի Ստեփանավան քաղաքային համայնք |
| 6. | Ծրագրի բյուջեն | 21 488 640 ՀՀ դրամ<br>Գումարի ստացման նախատեսվող ժամկետը՝ 31 . 03. 2018թ.<br>Ուղղությունները -Կոտայքի մարզի Կամարիս, Քասախ, Զովունի ,Բջնի գյուղերի մանկապարտեզների բակերում և Լոռու մարզի Ստեփանավան համայնքի քաղաքային զբոսայգում մանկական խաղահրապարակների տեղադրում<br>Գումարի բաշխումն ըստ շահառու համայնքների Կոտայքի մարզ՝Կամարիս , Քասախ, Զովունի Բջնի ՝ յուրաքանչյուրին 4252800 ՀՀ դրամ<br>Լոռու մարզ՝ Ստեփանավան քաղաք - 3901440 ՀՀ դրամ<br><br>Կատարման ժամկետը 2018 թվականի երկրորդ եռամսյակ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Կոտայքի մարզի Կամարիս , Քասախ , Զովունի , Բջնի գյուղերի նախակրթարան ՀՈԱԿ-ներ և Լոռու մարզի Ստեփանավանի քաղաքապետարան<br>Շահառու համայնքները ընտրվել են ըստ կարիքավորության աստիճանի: Հաշվի են առնվել անվտանգ խաղասարքերի բացակայությունը և շահառուների քանակը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.03.2018- 01.10.2018 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | • Խաղասարքերի տեղադրում Կոտայքի մարզի շահառու Կամարիս, Քասախ, Զովունի ,Բջնի համայնքների մանկապարտեզների բակում : Տեղադրման ժամկետները՝ 01.04.2018-30.04.2018:<br>Հատկացվող գումարը<br>Յուրաքանչյուր մանկապարտեզում՝ 2 332 800 ՀՀ ԴՐԱՄ<br>• Խաղասարքերի տակ բետոնե-ռետինե ծածկույթի տեղադրում: Յուրաքանչյուր մանկապարտեզում 100 քառակուսի մետր՝ 1 920 000 ՀՀ դրամ<br>Ժամկետները 01.05.2018թ.- 01.09.2018թ.<br>• Խաղասարքերի տեղադրում Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի գլխավոր զբոսայգում<br>Տեղադրման ժամկետները 01.04.2018-30.04.2018<br>Հատկացվող գումարը՝ 3 901 440 ՀՀ դրամ<br>• Ծրագրի աուդիտ 01.09.2018-01.10.2018<br>• Հատկացվող գումարը ՝576000 ՀՀ դրամ |

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1 Խաղասարքերի արժեքը տեղադրումով/ առանց ԱԱՀ/ (see table below) |

| Բջնիի | մանկապարտեզ | Տարիքային խումբը | քանակը | Արժեքը Առանց ԱԱՀ |
|---|---|---|---|---|
| 1 | Ճոճանակ 2 տեղ | 5-12 | 1 | 47 000 |
| 2 | Զսպանակով խաղասարք | 3-8 | 1 | 302 000 |
| 3 | Հեքիաթ 2 | 3-12 | 1 | 1745 000 |
| 4 | Տեղադրում | - | 1 | 238 800 |
| Քասախի մանկապարտեզ | | | | |
| 5 | Ճոճանակ 2 տեղ | 5-12 | 1 | 47 000 |
| 6 | Զսպանակով խաղասարք | 3-8 | 1 | 302 000 |
| 7 | Հեքիաթ 2 | 3-12 | 1 | 1745 00 |
| 8 | Տեղադրում | - | 1 | 238 800 |
| Զովունիի մանկապարտեզ | | | | |
| 9 | Ճոճանակ 2 տեղ | 5-12 | 1 | 47 000 |
| 10 | Զսպանակով խաղասարք | 3-8 | 1 | 302 000 |
| 11 | Հեքիաթ 2 | 3-12 | 1 | 1 745 000 |
| 12 | Տեղադրում | - | 1 | 238 800 |
| Կամարիսի մանկապարտեզ | | | | |
| 13 | Ճոճանակ 2 տեղ | 5-12 | 1 | 47 000 |
| 14 | Զսպանակով խաղասարք | 3-8 | 1 | 302 000 |
| 15 | [illegible] | 3-12 | 1 | 1745 000 |
| | Տեղադրում | - | 1 | 238 800 |
| 16 | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
| Ստեփանավանի գրունյջի | | | | |
| 17 | Ճոճանակ 2 տեղ | 5-12 | 2 | 47 000 |
| 18 | [illegible] | 5-12 | 1 | 295 000 |
| 19 | Պտույտ | 5-12 | 1 | 284 000 |
| 20 | Մեծ սահարան | -12 | 1 | 792 000 |
| 21 | Ունիվերսալ | 5-12 | 1 | 552 000 |
| 22 | Շղթաներով ճոճանակ 4 տեղ | 5-12 | 1 | 472 000 |
| 23 | Ջրուցարան | - | 2 | 236 000 |
| 24 | Դահուկներ | 12+ | 1 | 280 000 |
| 25 | Քայլք | 12+ | 1 | 320 000 |
| 26 | Ոտքերի մարզիչ | 12+ | 1 | 324 000 |
| Ընդամենը | | | | 13 213 000 ՀՀ դրամ |

2. Խաղասարքերի տակ տեղադրվող ռետինե ծածկույթի նկարագրությունը

Խաղասարքերի տակ տեղադրվելու է եռաշերտ ծածկույթ/Բետոն B 20 (250 մարկա) մետաղյան ցանց 4*20*20, ռետինե հատակ 0,5սմ + EPDM 0,5 սմ հաստությամբ:
1 մետր քառակուսի ռետինե հատակի արժեքը կազմում է 19 200 ՀՀ դրամ
Ընդամենը տեղադրվելու է 400 քառակուսի մետր,որի արժեքը կազմում է 7 680 000 ՀՀ դրամ

| | | |
|---|---|---|
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված | Աուդիտորական ծառայություն - 576 000 ՀՀ դրամ |

| | | |
|---|---|---|
| | կազմակերպական ծախսերը | Իրականացվելու է ծրագրի արտաքին աուդիտ. Կազմվելու է համապատասխան եզրակացություն անգլերեն և հայերեն լեզուներով: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Համագործակցող կողմեր են հանդիսանում Կոտայքի և Լոռու մարզի ՏԻՄ մարմինները՝ Ստեփանավանի, Կամարիսի, Ձովունու, Քասախի , Բջնիի համայնքապետարանները ինչպես նաև նախակրթարանները: Համագործակցության նպատակն է խաղահրապարակների հետագա շահագործումը և պահպանությունը:Ծրագրի շրջանակներում կնքվելու են համագործակցության հուշագրեր: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կիրականացվի նախապես կազմված և դոնորի կողմից հաստատված մոնիտորինգային խմբի կողմից ,որի կազմում ընդգրկվել են ներկայացուցիչներ «Մարդու իրավունքների միջազգային հանրություն» ՀԿ-ից, շահառու համայնքներից , ցանկության դեպքում ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովից: |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**6 ապրիլի 2018 թվականի N Մ- 228 - Ա**
**քաղ. Երևան**

### «ԱՍՄ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ-ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԻՇՏ ՁԵՐ ԿՈՂՔԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 28-ի N 01.1/14-2/5557-18, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2018 թվականի մարտի 29-ի N 02/14/52365-18, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2018 թվականի մարտի 28-ի N ՆՁ/22.2/3589-18, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2018 թվականի մարտի 29-ի N ԱՊ/ԱնՄ-2-1/3303-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 29-ի N 06/3-8/15729-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամի (Հայաստանի Հանրապետության, Շիրակի մարզ, քաղ. Գյումրի, Անտառային 5-րդ թաղամաս 58/2, ՀՎՀՀ՝ 05543573) կողմից իրականացվող՝ 166,816.94 ավստրալիական դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Միշտ ձեր կողքին» ծրագիրը (կցվում է):

2. «ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Շիրակի, Լոռու մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամի
Մարտուն Հարությունյանի կողմից
«16» մայիսի 2018թ.

## «ՄԻՇՏ ՁԵՐ ԿՈՂՔԻՆ» ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | *Ծրագրի նպատակը* | Աջակցել ՀՀ-ում բնակվող սոցիալապես անապահով ընտանիքներին, բազմազավակ ընտանիքներին, սիրիահայ ընտանիքներին, հաշմանդամներին, միայնակ ծերերին: Կազմակերպել միջոցառումներ տարբեր տոնական օրերին: |
| 2. | *Ծրագրի բարեգործական որակման նպատակը* | Օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | *Բարեգործը* | Ավստրալիայի ***«Արմինյան Քրիշչըն Միշըն Ինքորփորեյթիդ»*** մարդասիրական կազմակերպությունը: Հասցե՝ 1593 Chatswood NSW 2057 Australia, գրանցման համար՝ 1600675: |
| 4. | *Ծրագիրը կատարողը* | «ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամ, ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Անտառավան 5-րդ թաղամաս, 58/2, ՀՎՀՀ՝ 05543573 |
| 5. | *Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը* | Ծրագիրն առնչվում է սոցիալական ոլորտին և ընդգրկում է Երևան քաղաքը, Շիրակի մարզը, Լոռու մարզը, Գեղարքունիքի մարզը, Արմավիրի մարզը, Տավուշի մարզը: «ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամում գրանցված շահառուներին, մեր կողմից կազմակերպվող միջոցառումներին, ինչպես նաև ծրագրին կցված բաշխման ցանկում նշված սոցիալական պետական ծառայություններին և կազմակերպություններին անհատույց բեռների բաշխում: |
| 6. | *Ծրագրի բյուջեն* | Ծրագրի բյուջեն 2018 թվականի մայիսի 1-ից մինչև 2019 թվականի մայիսի 1-ը կազմում է 166,816.94 ավստրալիական դոլարին համարժեք դրամ: |
| 7. | *Բարեգործություն ստացողը* | Բարեգործություն ստացողներն են՝ Երևան քաղաքի (մոտ 300), Շիրակի մարզի (մոտ 110), Լոռու մարզի (մոտ [illegible]), Գեղարքունիքի մարզ (մոտ 70), Արմավիրի մարզի (մոտ 30), Տավուշի մարզի (մոտ 70) սոցիալապես անապահով ընտանիքները, «ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամի շահառուները (մոտ 90), ՀՀ, ք. Երևան, Հայաստանի մանկապատանեկան մշակութային հիմնադրամ (մոտ 150), մեր կողմից կազմակերպվող միջոցառումներին մասնակից երեխաները (մոտ 250), սիրիահայ ընտանիքները, հաշմանդամները, միայնակ ծերերը, նաև ՀՀ Առողջապահության նախարարությունը, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը: |
| 8. | *Ծրագրի իրականացման փուլը* | 2018 թվականի մայիսի 1-ից մինչև 2019 թվականի մայիսի 1-ը: |
| 9. | *Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը* | ՀՀ, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն. 60 արկղ՝ 13,664.00 ավստրալիական դոլարին համարժեք դրամ:<br>ՀՀ, Առողջապահության նախարարություն. 85 հատ՝ 21,160.0 ավստրալիական դոլարին համարժեք դրամ:<br>ՀՀ, Շիրակի մարզ, Գյումրու համայնքապետարան. 55 արկղ՝ 13,364.00 ավստրալիական դոլարին համարժեք դրամ:<br>ՀՀ, Լոռու մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին. 40 արկղ՝ 8,045.00 ավտրալիական դոլարին համարժեք դրամ:<br>ՀՀ, ք. Երևան, Հայաստանի մանկապատանեկան մշակութային հիմնադրամ. 30 արկղ՝ 20,447.20 ավստրալիական դոլարին համարժեք դրամ:<br>ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի «ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամ. 315 արկղ՝ 82,136.74 ավստրալիական դոլարին համարժեք դրամ: Ուղեբեռի փոխադրման և այլ չկանխատեսված ծախսեր՝ 8000 ավստրալիական դոլարին համարժեք դրամ: (2018թվականի ընթացքում մինչև 2019թվականի մարտ ամիսը):<br>***Միջոցառումներ՝***<br>***1. 2018 թվականի հոկտեմբեր ամսին «Աշնանային գույներ»***-նախատեսվում է Գեղարքունիքի մարզի, ք. Վարդենիսի՝ «Աստղավարդ» հաշմանդամ երեխաների ծնողների ՀԿ (մոտ 70 հաշմանդամ) հաշմանդամների համար (գործված ծածկոց՝ նոր, հագուստ՝ նոր և/կամ օգտ., անվասայլակ՝ օգտ., քայլակ՝ օգտ.): Գեղարքունիքի մարզի մարզպետարանի հետ համատեղ:<br>***2. 2018 թվականի դեկտեմբերի 17-21-ը «Երազ»***-նախատեսվում է Շիրակի մարզի մեկ դպրոցի (մոտ 40 երեխա) երեխաների համար՝ (գործված ծածկոց՝ նոր, գործված խաղալիք՝ նոր): Դպրոցը կընտրվի Շիրակի մարզի մարզպետարանի հետ համատեղ:<br>***3. 2019 թվականի հունվարի 7-21-ը «Ուրախ երեխա»***-նախատեսվում է Տավուշի մարզի մեկ դպրոցի՝ երկու դասարանի (մոտ 60 երեխա) երեխաների համար (գործված ծածկոց՝ նոր, հագուստ՝ նոր): Դպրոցը կընտրվի Տավուշի մարզի |

| | | |
|---|---|---|
| | | մարզպետարանի հետ համատեղ:<br>*Միջոցառումների ժամանակ ապրանքները բաշխվելու են «ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամի 2018թվականի ներկրված ուղեբեռի ապրանքներից:* |
| **10.** | ***Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը*** | Նախատեսված է բարերարի կողմից ուղեբեռի ներմուծում և անհատույց բաշխում՝ 2018 թվական՝ 166,816.94 ավստրալիական դոլարին համարժեք դրամ:<br>***Ներմուծում՝***<br>1.Գործված ծածկոց (նոր)՝ 59000 ավստրալիական դոլարին համարժեք դրամ, 6296 ֆունտ<br>2. Հագուստ (նոր և օգտ.), անկողնային պարագա (նոր), երեխայի հագուստ (նոր), նորածնի հագուստ (նոր)՝ 48,784.54 ավստրալիական դոլարին համարժեք դրամ, 2641.7 ֆունտ,<br>3. գործելու թել (նոր)՝ 197 ավստրալիական դոլարին համարժեք դրամ, 27.23 ֆունտ,<br>4. կոշիկ (նոր), պայուսակ (նոր և օգտ.)՝ 1764 ավստրալիական դոլարին համարժեք դրամ, 97.89 ֆունտ,<br>5. զամբյուղ (նոր)՝ 126 ավստրալիական դոլարին համարժեք դրամ, 26.45 ֆունտ,<br>6. գույք (նոր և օգտ.)՝ 42.350 ավստրալիական դոլարին համարժեք դրամ, 9637.2 ֆունտ,<br>7. խոհանոցային պարագա (նոր)՝ 117 ավստրալիական դոլարին համարժեք դրամ, 11.13 ֆունտ,<br>8. գործված խաղալիք (նոր), գրենական պիտույք (նոր)՝ 893.4 ավստրալիական դոլարին համարժեք դրամ, 78.38 ֆունտ,<br>9. հիգիենայի պարագա (նոր)՝ 2055 ավստրալիական դոլարին համարժեք դրամ, 9.37 ֆունտ,<br>*10.* գորգ (օգտ.)՝ 30 ավստրալիական դոլարին համարժեք դրամ, 17.64 ֆունտ:<br>*11.* երկաթե բեռնարկղ՝ /կոնտեյներ/ (օգտ.)՝ 3.500 ավստրալիական դոլարին համարժեք դրամ, 8598 ֆունտ<br>*12.* ուղեբեռի փոխադրման և այլ չկանխատեսված ծախսեր՝ 8000 ավստրալիական դոլարին համարժեք դրամ: |
| **11.** | ***Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը*** | Ծրագրի համար լրացուցիչ կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում, ծրագիրն իրականացվելու է հիմնադրամի ընդհանուր կազմակերպչական ծախսերի սահմաններում: |
| **12.** | ***Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ*** | Ծրագրի իրականացման ընթացքում հիմնադրամը համագործակցում է՝ ՀՀ, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ, Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների հետ, ՀՀ, Առողջապահության նախարարության, ինչպես նաև ՀՀ, Շիրակի մարզ, Գյումրու համայնքապետարանի, ՀՀ, Լոռու մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի, ՀՀ, Գեղարքունիքի մարզի, ՀՀ, Արմավիրի մարզի, ՀՀ, Տավուշի մարզի, ՀՀ, ք. Երևան, Հայաստանի Մանկապատանեկան Միջազգային Հիմնադրամի հետ: |
| **13.** | ***Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը*** | Ծրագրի իրականացման արդյունավետության նկատմամբ վերահսկողություն կիրականացվի Ավստրալիայի «Արմինյան Քրիշչըն Միշըն Ինքորփորեյթիդ» մարդասիրական կազմակերպության կողմից:<br>Կառավարության գործունեության վերաբերյալ սահմանված կարգով տեղեկատվություն ներկայացնել ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**6 ապրիլի 2018 թվականի N Մ- 229 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 20-ի N 01.1/14-2/5024-18, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2018 թվականի մարտի 20-ի N ՆՁ/22.2/3149-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 21-ի N 06/3-4/13687-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Բարեգործական որակել Գերմանիայի Հայ բժշկական ասոցիացիայի կողմից Հայաստանի Հանրապետությունում Արցախի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ուղարկված դեղորայքի և բժշկական պարագաների (15 տեղ, 106.3 կգ ընդհանուր քաշով, 1,950.97 եվրո արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, Արևմտյան մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո անհատույց հանձնվելու է Արցախի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

2. Սույն որոշումն ուղարկել Արցախի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**6 ապրիլի 2018 թվականի N Մ- 230 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 27-ի N 01.1/14-2/5525-18, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2018 թվականի մարտի 27-ի N ՆՁ/22.2/3476-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 28-ի N 06/3-4/15219-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հայ-ամերիկյան առողջապահական ասոցիացիայի կողմից IDA FOUNDATION կազմակերպության միջոցով Հայաստանի Հանրապետությունում Արցախի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ուղարկված դեղորայքի և բժշկական պարագաների (45 տեղ, 354 կգ ընդհանուր քաշով, 7,338.72 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, Արևմտյան մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո անհատույց հանձնվելու է Արցախի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

2. Սույն որոշումն ուղարկել Արցախի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**6 ապրիլի 2018 թվականի N Մ- 231 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 27-ի N 01.1/14-2/5524-18, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2018 թվականի մարտի 27-ի N ՆՁ/22.2/3526-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 29-ի N 06/3-4/15588-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Շվեյցարիայի Կյուներ հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետությունում Արցախի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ուղարկված բժշկական սարքավորումների (1 տեղ, 240 կգ ընդհանուր քաշով, 1,050 շվեյցարական ֆրանկ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1,250 եվրո, Արարատյան մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո անհատույց հանձնվելու է Արցախի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

2. Սույն որոշումն ուղարկել Արցախի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**6 ապրիլի 2018 թվականի N Մ- 232 - Ա**

**քաղ. Երևան**

# «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի ապրիլի 4-ի N 01.1/14-2/5873-18, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2018 թվականի ապրիլի 3-ի N ՆՁ/2.22/3703-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ապրիլի 3-ի N 06/3-8/16156-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից ARMENIA FUND INCORPORATED մասնաճյուղի և ԱՄՆ-ում բնակվող հաշմանդամների կողմից «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ուղարկված հաշմանդամների համար նախատեսված պարագաների (սայլակներ, մահճակալներ, տակդիրներ և խնամքի այլ միջոցներ, 40 տեղ, 777 կգ քաշով, 6,800 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 200 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

Բեռն անհատույց բաշխվելու է Արցախի ազատամարտի հաշմանդամ վետերաններին:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**6 ապրիլի 2018 թվականի N Մ- 233 - Ա**

**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 30-ի N 01.1/14-2/5844-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ապրիլի 3-ի N 06/3-8/16197-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից ARMENIA FUND INCORPORATED մասնաճյուղի կողմից «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ուղարկված հեծանիվների (57 տեղ, 847.9 կգ քաշով, 12,529 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 1,200 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

Բեռն անհատույց բաշխվելու է Արցախի զոհված ազատամարտիկների ընտանիքների մինչև 18 տարեկան երեխաների միջև՝ Արցախի կառավարության կողմից ներկայացված ցուցակների հիման վրա:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ծնակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Արցախի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

4/6.6

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**6 ապրիլի 2018 թվականի N Մ- 234 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՀԱՑԻԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 17-ի N 01.1/14-2/4834-18, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2018 թվականի մարտի 21-ի N 03/7-1/3174-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մարտի 20-ի N 06/3-8/ 3500-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հոլանդիայի «Ալվան ծաղիկ» հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հացիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ուղարկված բեռը (6,608 կգ քաշով, 10,000 եվրո արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 4,000 եվրո, բեռի և բաշխման ցանկերը կցվում են, «Հյուսիսային» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հացիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումն և բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, և [illegible] Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների [illegible] Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱ[illegible] Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՄԱՍՆԱՑՈՒՑԱԿ

**OCGU 806542-1**

| 22 | Ապրանքի անվանումը | Քանակը ըստ չափման միավորի | Չափման միավոր | Քաշը (կգ) բրուտտո | Քաշը (կգ) նետտո | Միավորի արժեքը € | Ընդհանուր արժեքը € | Ծագման երկիրը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ուսուցողական նյութեր և խաղեր | 62 | արկղ | 450 | 390 | 25 | 1550 | Հոլանդիա |
| 2 | Պլաստմասե տնակ | 1 | հատ | 1 | 1 | 5 | 5 | Հոլանդիա |
| 3 | Մանկական նկարազարդ գրքեր | 2 | արկղ | 51 | 50 | 25 | 50 | Հոլանդիա |
| 4 | Արվեստի նկարազարդ գրքեր/ալբոմներ | 2 | արկղ | 44 | 43 | 20 | 40 | Հոլանդիա |
| 5 | Արվեստի նկարազարդ գրքեր/ալբոմներ | 2 | արկղ | 43 | 42 | 25 | 50 | Հոլանդիա |
| 6 | Հեծանիվ | 1 | հատ | 5 | 5 | 5 | 5 | Հոլանդիա |
| 7 | Դաշնամուր | 4 | հատ | 120 | 120 | 50 | 200 | Հոլանդիա |
| 8 | Երաժշտական արքեսուարներ | 4 | հատ | 58 | 54 | 25 | 100 | Հոլանդիա |
| 9 | Երաժշտական արքեսուարներ | 3 | հատ | 13 | 10 | 5 | 15 | Հոլանդիա |
| 10 | Գրադարակ | 3 | հատ | 30 | 30 | 5 | 15 | Հոլանդիա |
| 11 | Ցուցատախտակ | 1 | հատ | 5 | 5 | 5 | 5 | Հոլանդիա |
| 12 | Ցուցատախտակ | 3 | հատ | 75 | 75 | 10 | 30 | Հոլանդիա |
| 13 | Խոհանոցային պահարան | 1 | հատ | 50 | 50 | 25 | 25 | Հոլանդիա |
| 14 | Խոհանոցային պահարան | 33 | հատ | 1320 | 1320 | 35 | 1155 | Հոլանդիա |
| 15 | Աթոռակ | 8 | հատ | 61 | 61 | 5 | 40 | Հոլանդիա |
| 16 | Սայլակ | 3 | հատ | 18 | 18 | 5 | 15 | Հոլանդիա |
| 17 | Սպիտակ գրատախտակ | 2 | հատ | 8 | 8 | 10 | 20 | Հոլանդիա |
| 18 | Նկարչության մոլբերտ փայտից | 1 | հատ | 5 | 5 | 5 | 5 | Հոլանդիա |
| 19 | Փայտե մետր | 1 | հատ | 1 | 1 | 5 | 5 | Հոլանդիա |

| 20 | Թմբուկ | 2 | հատ | 55 | 55 | 25 | 50 | Հոլանդիա |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 21 | Փաթեթավորման թուղթ | 4 | հատ | 20 | 20 | 5 | 20 | Հոլանդիա |
| 22 | Դպրոցական սեղան | 200 | հատ | 2600 | 2600 | 20 | 4000 | Հոլանդիա |
| 23 | Դպրոցական աթոռ | 150 | հատ | 600 | 600 | 10 | 1500 | Հոլանդիա |
| 24 | Շարժական գրատախտակ | 2 | հատ | 22 | 22 | 25 | 50 | Հոլանդիա |
| 25 | Գրատախտակ | 3 | հատ | 150 | 150 | 75 | 225 | Հոլանդիա |
| 26 | Մեծ սեղան | 9 | հատ | 225 | 225 | 25 | 225 | Հոլանդիա |
| 27 | Սեղանի ոտքեր | 6 | հատ | 12 | 12 | 5 | 30 | Հոլանդիա |
| 28 | Մեծ պահարան | 2 | հատ | 20 | 20 | 10 | 20 | Հոլանդիա |
| 29 | Ուսուցչի սեղան | 3 | հատ | 120 | 120 | 30 | 90 | Հոլանդիա |
| 30 | Գրասենյակային աթոռ | 1 | հատ | 15 | 15 | 10 | 10 | Հոլանդիա |
| 31 | Համակարգչային աքսեսուարներ /ստեղնաշար, մկնիկներ և միացման մալուխներ/ | 13 | հատ | 247 | 234 | 20 | 260 | Հոլանդիա |
| 32 | Համակարգիչ 50 հատ /Acer Veriton L480G/, 8 տարի օգտագործված | 2 | արկղ | 54 | 50 | 20 | 40 | Հոլանդիա |
| 33 | Շարժական գրատախտակ | 2 | հատ | 110 | 110 | 75 | 150 | Հոլանդիա |
| | Ընդամենը | 536 | | 6608 | 6521 | | € 10 000,00 | |

Այս բեռի ընդհանուր քաշն է՝ 6608.00 կգ (վեց հազար վեց հարյուր ութ), արժեքը՝ € 10 000.00 (տաս հազար եվրո), ճանապարհածախսը կազմում է՝ € 4 000.00 (չորս հազար եվրո):

## ՀԱՑԻԿ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԿՈՂՄԻՑ ՍՏԱՑՎԵԼԻՔ ԲԵՌԻ ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ

Container OCGU 806542-1

| Հ/Հ | Ստացող կազմակերպություն | Քանակ (արկղ, հատ | Արկղի պարունակություն | Ապրանքի անվանում | Միավորի արժեք € | Ընդհանուր արժեք € |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Հացիկ գյուղի միջնակարգ դպրոց | 366 | 4 արկղ | Ուսուցողական նյութեր և խաղեր | 25 | 100 |
| | | | 200 հատ | Դպրոցական սեղան | 20 | 4 000 |
| | | | 100 հատ | Դպրոցական աթոռ | 10 | 1000 |
| | | | 9 հատ | Մեծ սեղան | 25 | 225 |
| | | | 3 հատ | Ուսուցչի սեղան | 30 | 90 |
| | | | 6 հատ | Սեղանի ոտքեր | 5 | 30 |
| | | | 1 հատ | Գրասենյակային աթոռ | 10 | 10 |
| | | | 2 հատ | Աթոռակ | 5 | 10 |
| | | | 3 հատ | Գրատախտակ | 75 | 225 |
| | | | 2 հատ | Շարժական գրատախտակ | 25 | 50 |
| | | | 33 հատ | Խոհանոցային պահարան | 35 | 1 155 |
| | | | 1 հատ | Սայլակ | 5 | 5 |
| | | | 2 հատ | Մեծ պահարան | 10 | 20 |
| 2. | «Ալվան Ծաղիկ սոցիալ-կրթական կենտրոն» հասարակական կազմակերպություն | 150 | 58 արկղ | Ուսուցողական նյութեր և խաղեր | 25 | 1450 |
| | | | 50 հատ | Դպրոցական աթոռ | 10 | 500 |
| | | | 1 հատ | Հեծանիվ | 5 | 5 |
| | | | 2 հատ | Սայլակ | 5 | 10 |
| | | | 1 հատ | Փայտե մետր | 5 | 5 |
| | | | 2 հատ | Թմբուկ | 25 | 50 |
| | | | 2 արկղ | Մանկական նկարազարդ գրքեր | 25 | 50 |
| | | | 1 հատ | Նկարչության մոլբերտ փայտից | 5 | 5 |
| | | | 4 հատ | Փաթեթավորման թուղթ | 5 | 20 |
| | | | 1 հատ | Շարժական գրատախտակ | 50 | 50 |
| | | | 2 հատ | Սպիտակ գրատախտակ | 10 | 20 |
| | | | 1 հատ | Գրատախտակ | 100 | 100 |
| | | | 1 հատ | Խոհանոցային պահարան | 25 | 25 |
| | | | 3 հատ | Դաշնամուր | 50 | 150 |
| | | | 1 հատ | Պլաստմասե տնակ | 5 | 5 |
| | | | 3 հատ | Գրադարակ | 5 | 15 |
| | | | 6 հատ | Աթոռակ | 5 | 30 |
| | | | 1 հատ | Ցուցատախտակ | 5 | 5 |
| | | | 3 հատ | Ցուցատախտակ | 10 | 30 |
| | | | 3 հատ | Երաժշտական աքսեսուարներ | 5 | 15 |
| | | | 4 հատ | Երաժշտական աքսեսուարներ | 25 | 100 |
| | | | | | | |
| 3. | Շիրակի Մարզային Գրադարան | 20 | 2 արկղ | Արվեստի նկարազարդ գրքեր/ալբոմներ | 20 | 40 |
| | | | 2 արկղ | Արվեստի նկարազարդ գրքեր/ալբոմներ | 25 | 50 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 2 արկղ | 50 Համակարգիչներ /Acer Veriton L480G/, 8 տարի օգտագործված | 20 | 40 |
| | | | | 13 հատ | Համակարգչային աքսեսուարներ /ստեղնաշար, մկնիկներ և միացման մալուխներ/ | 20 | 260 |
| | | | | 1 հատ | Դաշնամուր | 50 | 50 |
| Ընդամենը | | | 536 | | | | € 10 000,00 |

Այս բեռի ընդհանուր քաշն է՝ 6608.00 կգ (վեց հազար վեց հարյուր ութ), արժեքը՝ € 10 000.00 (տաս հազար եվրո), ճանապարհածախսը կազմում է՝ € 4 000.00 (չորս հազար եվրո):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**6 ապրիլի 2018 թվականի N Մ- 235 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1283-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 30-ի N 01.1/14-2/5816-18, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2018 թվականի մարտի 29-ի N ՆՁ/22.2/3640-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 3-ի N 06/3-8/16170-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Բելգիայի ՆԱՖ ասոցիացիայի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված օգտագործված համակարգիչները (բժշկական ծրագրավորիմամբ, 3 տեղ, 40 հատ, 752 կգ ընդհանուր քաշով, 8,000 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1,947.68 եվրո, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն վերականգնողական բժշկության զարգացմանը և բժշկասոցիալական խնդիրների բարելավմանը» ծրագրի մասին» N Մ-1283-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

6 ապրիլի 2018 թվականի N Մ - 236 -Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի N Մ-002-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԾՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 28-ի N 01.1/14-2/5609-18, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2018 թվականի ապրիլի 3-ի N ԱՊ/ԱեՍ-2-1/3415-18 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 30-ի N 06/3-8/16112-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության ԱՄՆ-ի գրասենյակի կողմից «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (36 տեղ, 6,403.40 կգ ընդհանուր քաշով, 52,589 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով, ներառյալ 2,589 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 29-ի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում» ծրագրի մասին» N Մ-002-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղի հասցեով ԱՄՆ-ից ստացվող բեռի

### ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ (մեկ կոնտեյներ)

Կոնտեյների համարն է՝ GLDU 076601-8: Բեռի ընդհանուր արժեքը կազմում է 52589.00 ԱՄՆ դոլար, որից տրանսպորտային ծախսերը կազմում են 2589.00 ԱՄՆ դոլար, քաշը՝ 6403.40 կգ, տեղերի քանակը 36:

| Քանակ | Չափման միավոր | Նկարագրություն | Քաշը (կգ.բր.) | Գինը (ԱՄՆ դոլար) | Բաշխման վայրը, ՀՀ Կառավարության ԲԾՀՀ որոշումը |
|---|---|---|---|---|---|
| 700<br>35 | Հատ<br>Հատ | Բլուզկա<br>Խոհանոցային պարագաներ | | **4254.39**<br>**44.73** | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Գյումրու տարածաշրջան) |
| 700<br>35 | Հատ<br>Հատ | Բլուզկա<br>Խոհանոցային պարագաներ | | **4254.39**<br>**44.73** | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Իջևանի տարածաշրջան) |
| 700<br>35 | Հատ<br>Հատ | Բլուզկա<br>Խոհանոցային պարագաներ | | **4254.39**<br>**44.73** | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Վարդենիսի տարածաշրջան) |
| 700<br>35 | Հատ<br>Հատ | Բլուզկա<br>Խոհանոցային պարագաներ | | **4254.39**<br>**44.73** | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ալավերդու տարածաշրջան) |
| 700<br>35 | Հատ<br>Հատ | Բլուզկա<br>Խոհանոցային պարագաներ | | **4254.39**<br>**44.73** | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Կապանի տարածաշրջան) |
| 700<br>35 | Հատ<br>Հատ | Բլուզկա<br>Խոհանոցային պարագաներ | | **4254.39**<br>**44.73** | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Սիսիանի և Գորիսի տարածաշրջան) |

4/6.13

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 700<br>35 | Հատ<br>Հատ | Բլուզկա<br>Խոհանոցային պարագաներ | | **4254.39**<br>**44.73** | Մ-002-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում<br>(Թալինի տարածաշրջան) |
| 700<br>35 | Հատ<br>Հատ | Բլուզկա<br>Խոհանոցային պարագաներ | | **4254.39**<br>**44.73** | Մ-002-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում<br>(Գավառի տարածաշրջան) |
| 700<br>35 | Հատ<br>Հատ | Բլուզկա<br>Խոհանոցային պարագաներ | | **4254.39**<br>**44.73** | Մ-002-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում<br>(Ստեփանավանի տարածաշրջան) |
| 400<br>25 | Հատ<br>Հատ | Բլուզկա<br>Խոհանոցային պարագաներ | | **2431.08**<br>**31.95** | Մ-002-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում<br>(Ամասիայի տարածաշրջան) |
| 500<br>25 | Հատ<br>Հատ | Բլուզկա<br>Խոհանոցային պարագաներ | | **3038.85**<br>**31.95** | Մ-002-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում<br>(Ապարանի տարածաշրջան) |
| 400<br>25 | Հատ<br>Հատ | Բլուզկա<br>Խոհանոցային պարագաներ | | **2431.08**<br>**31.95** | Մ-002-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում<br>(Նոյեմբերյանի տարածաշրջան) |
| 955<br>75 | Հատ<br>Հատ | Բլուզկա<br>Խոհանոցային պարագաներ | | **5804.21**<br>**95.85** | Մ-002-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում<br>(Երևանի Քանաքեռ- Զեյթուն վարչական շրջան) |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | 6403.40 | 52589.00 | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**6 ապրիլի 2018 թվականի N Մ- 237 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի N Մ-002-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1 («ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 15-ի N 01.1/14-2/4623-18, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սցիալական հարցերի նախարարության 2018 թվականի մարտի 17-ի N ԱՊ/ԱնՄ-2-1/2801-18 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 17-ի N 06/3-8/13080-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության ԱՄՆ-ի գրասենյակի կողմից «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (892 տեղ, 6,326.30 կգ ընդհանուր քաշով, 106,300 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով, ներառյալ 6,300 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 29-ի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում» ծրագրի մասին» N Մ-002-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետարանին և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

4/6.1

**Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղի հասցեով ԱՄՆ-ից ստացվող բեռի**

**ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ (երկու կոնտեյներ)**

Կոնտեյներների համարներն են՝ MSCU 472433-5; MSCU 558981-5: Բեռի ընդհանուր արժեքը կազմում է 106300.00 ԱՄՆ դոլար, որից տրանսպորտային ծախսերը կազմում են 6300.00 ԱՄՆ դոլար, քաշը՝ 6326.30 կգ, տեղերի քանակը 892:

| Քանակ | Չափման միավոր | Նկարագրություն | Քաշը (կգ.բր.) | Գինը (ԱՄՆ դոլար) | Բաշխման վայրը, ՀՀ Կառավարության ԲԾՀՀ որոշումը |
|---|---|---|---|---|---|
| 320 | Զույգ | Կոշիկ | | **2810.53** | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Գյումրու տարածաշրջան) |
| 30 | Հատ | Պայուսակ | | **283.74** | |
| 160 | Հատ | Ձմեռային հագուստ | | **1702.44** | |
| 300 | Հատ | Գլխարկ | | **1773.44** | |
| 20 | Հատ | Զուգագուլպա | | **59.09** | |
| 32 | Հատ | Շորտ | | **189.16** | |
| 27 | Հատ | Տաբատ | | **191.49** | |
| 80 | Հատ | Շապիկ | | **541.23** | |
| 27 | Հատ | Աքսեսուարներ | | **116.28** | |
| 320 | Զույգ | Կոշիկ | | **2810.53** | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Իջևանի տարածաշրջան) |
| 30 | Հատ | Պայուսակ | | **283.74** | |
| 160 | Հատ | Ձմեռային հագուստ | | **1702.44** | |
| 300 | Հատ | Գլխարկ | | **1773.44** | |
| 20 | Հատ | Զուգագուլպա | | **59.09** | |
| 32 | Հատ | Շորտ | | **189.16** | |
| 27 | Հատ | Տաբատ | | **191.49** | |
| 80 | Հատ | Շապիկ | | **541.23** | |
| 27 | Հատ | Աքսեսուարներ | | **116.28** | |
| 320 | Զույգ | Կոշիկ | | **2810.53** | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Վարդենիսի տարածաշրջան) |
| 30 | Հատ | Պայուսակ | | **283.74** | |
| 160 | Հատ | Ձմեռային հագուստ | | **1702.44** | |
| 300 | Հատ | Գլխարկ | | **1773.44** | |
| 20 | Հատ | Զուգագուլպա | | **59.09** | |
| 32 | Հատ | Շորտ | | **189.16** | |
| 27 | Հատ | Տաբատ | | **191.49** | |
| 80 | Հատ | Շապիկ | | **541.23** | |
| 27 | Հատ | Աքսեսուարներ | | **116.28** | |
| 320 | Զույգ | Կոշիկ | | **2810.53** | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ալավերդու տարածաշրջան) |
| 30 | Հատ | Պայուսակ | | **283.74** | |
| 160 | Հատ | Ձմեռային հագուստ | | **1702.44** | |
| 300 | Հատ | Գլխարկ | | **1773.44** | |
| 20 | Հատ | Զուգագուլպա | | **59.09** | |
| 32 | Հատ | Շորտ | | **189.16** | |
| 27 | Հատ | Տաբատ | | **191.49** | |
| 80 | Հատ | Շապիկ | | **541.23** | |
| 27 | Հատ | Աքսեսուարներ | | **116.28** | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 320 | Զույգ | Կոշիկ | | 2810.53 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Կապանի տարածաշրջան) |
| 30 | Հատ | Պայուսակ | | 283.74 | |
| 160 | Հատ | Ձմեռային հագուստ | | 1702.44 | |
| 300 | Հատ | Գլխարկ | | 1773.44 | |
| 20 | Հատ | Զուգագուլպա | | 59.09 | |
| 32 | Հատ | Շորտ | | 189.16 | |
| 27 | Հատ | Տաբատ | | 191.49 | |
| 80 | Հատ | Շապիկ | | 541.23 | |
| 27 | Հատ | Աքսեսուարներ | | 116.28 | |
| 320 | Զույգ | Կոշիկ | | 2810.53 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Սիսիանի և Գորիսի տարածաշրջան) |
| 30 | Հատ | Պայուսակ | | 283.74 | |
| 160 | Հատ | Ձմեռային հագուստ | | 1702.44 | |
| 300 | Հատ | Գլխարկ | | 1773.44 | |
| 20 | Հատ | Զուգագուլպա | | 59.09 | |
| 32 | Հատ | Շորտ | | 189.16 | |
| 27 | Հատ | Տաբատ | | 191.49 | |
| 80 | Հատ | Շապիկ | | 541.23 | |
| 27 | Հատ | Աքսեսուարներ | | 116.28 | |
| 320 | Զույգ | Կոշիկ | | 2810.53 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Թալինի տարածաշրջան) |
| 30 | Հատ | Պայուսակ | | 283.74 | |
| 160 | Հատ | Ձմեռային հագուստ | | 1702.44 | |
| 300 | Հատ | Գլխարկ | | 1773.44 | |
| 20 | Հատ | Զուգագուլպա | | 59.09 | |
| 32 | Հատ | Շորտ | | 189.16 | |
| 27 | Հատ | Տաբատ | | 191.49 | |
| 80 | Հատ | Շապիկ | | 541.23 | |
| 27 | Հատ | Աքսեսուարներ | | 116.28 | |
| 320 | Զույգ | Կոշիկ | | 2810.53 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Գավառի տարածաշրջան) |
| 30 | Հատ | Պայուսակ | | 283.74 | |
| 160 | Հատ | Ձմեռային հագուստ | | 1702.44 | |
| 300 | Հատ | Գլխարկ | | 1773.44 | |
| 20 | Հատ | Զուգագուլպա | | 59.09 | |
| 32 | Հատ | Շորտ | | 189.16 | |
| 27 | Հատ | Տաբատ | | 191.49 | |
| 80 | Հատ | Շապիկ | | 541.23 | |
| 27 | Հատ | Աքսեսուարներ | | 116.28 | |
| 320 | Զույգ | Կոշիկ | | 2810.53 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ստեփանավանի տարածաշրջան) |
| 30 | Հատ | Պայուսակ | | 283.74 | |
| 160 | Հատ | Ձմեռային հագուստ | | 1702.44 | |
| 300 | Հատ | Գլխարկ | | 1773.44 | |
| 20 | Հատ | Զուգագուլպա | | 59.09 | |
| 32 | Հատ | Շորտ | | 189.16 | |
| 27 | Հատ | Տաբատ | | 191.49 | |
| 80 | Հատ | Շապիկ | | 541.23 | |
| 27 | Հատ | Աքսեսուարներ | | 116.28 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 320 | Զույգ | Կոշիկ | | 2810.53 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ամասիայի տարածաշրջան) |
| 30 | Հատ | Պայուսակ | | 283.74 | |
| 160 | Հատ | Ձմեռային հագուստ | | 1702.44 | |
| 300 | Հատ | Գլխարկ | | 1773.44 | |
| 20 | Հատ | Զուգագուլպա | | 59.09 | |
| 32 | Հատ | Շորտ | | 189.16 | |
| 27 | Հատ | Տաբատ | | 191.49 | |
| 80 | Հատ | Շապիկ | | 541.23 | |
| 27 | Հատ | Աքսեսուարներ | | 116.28 | |
| 320 | Զույգ | Կոշիկ | | 2810.53 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ապարանի տարածաշրջան) |
| 30 | Հատ | Պայուսակ | | 283.74 | |
| 160 | Հատ | Ձմեռային հագուստ | | 1702.44 | |
| 300 | Հատ | Գլխարկ | | 1773.44 | |
| 20 | Հատ | Զուգագուլպա | | 59.09 | |
| 32 | Հատ | Շորտ | | 189.16 | |
| 27 | Հատ | Տաբատ | | 191.49 | |
| 80 | Հատ | Շապիկ | | 541.23 | |
| 27 | Հատ | Աքսեսուարներ | | 116.28 | |
| 320 | Զույգ | Կոշիկ | | 2810.53 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Նոյեմբերյանի տարածաշրջան) |
| 30 | Հատ | Պայուսակ | | 283.74 | |
| 160 | Հատ | Ձմեռային հագուստ | | 1702.44 | |
| 300 | Հատ | Գլխարկ | | 1773.44 | |
| 20 | Հատ | Զուգագուլպա | | 59.09 | |
| 32 | Հատ | Շորտ | | 189.16 | |
| 27 | Հատ | Տաբատ | | 191.49 | |
| 80 | Հատ | Շապիկ | | 541.23 | |
| 27 | Հատ | Աքսեսուարներ | | 116.28 | |
| 547 | Զույգ | Կոշիկ | | 4804.24 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Երևանի Քանաքեռ- Զեյթուն վարչական շրջան) |
| 50 | Հատ | Պայուսակ | | 472.91 | |
| 368 | Հատ | Ձմեռային հագուստ | | 3915.60 | |
| 506 | Հատ | Գլխարկ | | 2991.21 | |
| 14 | Հատ | Զուգագուլպա | | 41.37 | |
| 42 | Հատ | Շորտ | | 248.28 | |
| [illegible] | Հատ | Տաբատ | | 361.71 | |
| [illegible] | Հատ | Շապիկ | | 1339.55 | |
| [illegible] | Հատ | Աքսեսուարներ | | 116.28 | |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | 6326.30 | 106300.00 | |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**6 ապրիլի 2018 թվականի N Մ - 238 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի N Մ-217-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՍԵՅՎ ԴԸ ՉԻԼԴՐԵՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի ապրիլի 3-ի N 01.1/14-2/6028-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 13-ի N 06/3-8/18886-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սեյվ դը չիլդրեն Ինթերնեյշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2018 թվականի մարտի 16-ի «Սեյվ դը չիլդրեն Ինթերնեյշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող «Հանուն երեխաների սոցիալական և կրթական բարեկեցության» ծրագրի մասին» N Մ-217-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Մետատեկ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00099721) 2018 թվականի փետրվարի 19-ին կնքված N 007/SCI-ARM/CBSCD/18 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2018 թվականի ապրիլի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը «Հայկ և Էլզա Տիտիզյան» հաշմանդամություն ունեցող երեխաների վերականգնման «Լուսէ» կենտրոնի համար կահույքի պատրաստում՝ 1,807,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՍԱՎ-ՎԱՍ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00089023) 2018 թվականի փետրվարի 1-ին կնքված N 005/SCI-ARM/CBSCD/18 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2018 թվականի ապրիլի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը «Հայկ և Էլզա Տիտիզյան» հաշմանդամություն ունեցող երեխաների վերականգնման «Լուսէ» կենտրոնի մաքրման ծառայությունների մատուցում՝ ամսեկան 209,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Ֆլեշ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01808789) 2018 թվականի մարտի 28-ին կնքված N 082/18 պայմանագրում և փոխանցման հաշվում նշված գործարքը, որով նախատեսվում է բենզինի ձեռքբերում՝ 1,320,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**6 ապրիլի 2018 թվականի N Մ- 239 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N Մ-1354-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 30-ի N 01.1/14-2/5842-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 3-ի N 06/3-8/16308-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 14-ի «Տիրամայր Հայաստանի կուսանոց» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Անհոգ մանկություն, ապահով ծերություն» ծրագրի մասին» N Մ-1354-Ա (2017 թվականի սեպտեմբերի 8-ի Մ-756-Ա և դեկտեմբերի 21-ի N Մ-1041-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02586575) 2018 թվականի մարտի 19-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 1,300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**6 ապրիլի 2018 թվականի N Մ - 240 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ ՔԱՂԱՔԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԿԱՀԱՎՈՐՄԱՆ 2-ՐԴ ՓՈՒԼ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի ապրիլի 3-ի N 01.1/14-2/6029-18, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2018 թվականի ապրիլի 5-ի N 02/14/52730-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 3-ի N 06/3-8/16415-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 62,838,000 դրամ ընդհանուր ~~արժողությամբ «Արցախի~~ Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի հանրակրթական դպրոցների կահավորման 2-րդ փուլ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՍՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2018 թվականի մարտի 29-ին կնքված N ԱՀ-Կ-06/18 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գույքի պատրաստման, գնման և տեղափոխման աշխատանքների իրականացում՝ 62,838,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որո[illegible] Արցախի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հ[illegible] ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետությ[illegible] արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետությ[illegible] պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳ[illegible] Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան
«30» մարտի 2018թ.

«Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի հանրակրթական դպրոցների կահավորման 2-րդ փուլ »

**ԾՐԱԳԻՐ**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ապահովել Արցախի կառավարության կողմից առաջարկված լրացուցիչ ցանկում ընդգրկված դպրոցները անհրաժեշտ կահույքով (կահույքի բաշխումն իրականացնելու է Արցախի կառավարությունը) |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ, ֆիզիկական և իրավաբանական անձիք |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Արցախի Հանրապետություն, կրթության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 62.838.000,00 դրամ: |

| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի հանրակրթական դպրոցները |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2018թ մարտի 29-ից մինչեւ 2018թ. օգոստոսի 29-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2018թ մարտի 29-ից մինչեւ 2018թ. օգոստոսի 29-ը ընկած ժամանակահատվածում Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի հանրակրթական դպրոցների լրացուցիչ կահավորում՝ 62.838.000,00 ՀՀ դրամ: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի Հավելված թիվ 1-ի ցանկի համաձայն լրացուցիչ գույքի պատրաստում, գնում, տեղափոխում եւ անհատույց տեղադրում՝ 62.838.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԱՀ Կառավարության հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**6 ապրիլի 2018 թվականի N Մ - 241 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՍԿԵՐԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՆՈՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՀԱՎՈՐՄԱՆ 2-ՐԴ ՓՈՒԼ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի ապրիլի 4-ի N 01.1/14-2/6059-18, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2018 թվականի ապրիլի 5-ի N 02/14/52731-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 4-ի N 06/3-8/16668-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 703,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Նորագյուղ համայնքի մանկապարտեզի ամբողջական կահավորման 2-րդ փուլ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2018 թվականի մարտի 29-ին կնքված N ԱՀ-Կ-07/18 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գույքի պատրաստման, գնման և տեղափոխման աշխատանքների իրականացում՝ 703,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Արցախի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան
«30» մարտի 2018թ.

**« Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Նորագյուղ համայնքի մանկապարտեզի ամբողջական կահավորման 2-րդ փուլ»**

**ԾՐԱԳԻՐ**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ապահովել Հիմնադրամի կողմից կառուցած Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Նորագյուղ համայնքի մանկապարտեզը անհրաժեշտ լրացուցիչ կահույքով |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ, ֆիզիկական և իրավաբանական անձիք |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Արցախի Հանրապետություն, Ասկերանի շրջան, Նորագյուղ համայնք, սոցիալական բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 703.000,00 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Նորագյուղ համայնքի բնակիչները |

| | | |
|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2018թ մարտի 29-ից մինչեւ 2018թ մայիսի 31-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2018թ մարտի 29-ից մինչեւ 2018թ մայիսի 31-ը ընկած ժամանակահատվածում ապահովել Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Նորագյուղ համայնքի մանկապարտեզը լրացուցիչ կահույքով՝ 703.000,00 դրամ արժեքով |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի Հավելվածի ցանկի համաձայն լրացուցիչ գույքի պատրաստում, գնում, տեղափոխում եւ անհատույց տեղադրում՝ 703.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԱՀ կառավարության հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

8

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**6 ապրիլի 2018 թվականի N Մ- 242 - Ա**

**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի ապրիլի 3-ի N 01.1/14-2/5982-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ապրիլի 3-ի N 06/3-8/16408-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից ARMENIA FUND INCORPORATED մասնաճյուղի կողմից «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ուղարկված հեծանիվների (170 հատ, 2,940 կգ քաշով, 25,500 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 2,550 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

Բեռն անհատույց բաշխվելու է Արցախի զոհված ազատամարտիկների ընտանիքների մինչև 18 տարեկան երեխաների միջև՝ Արցախի կառավարության կողմից ներկայացված ցուցակների հիման վրա:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Արցախի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**6 ապրիլի 2018 թվականի N Մ- 243 - Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի ապրիլի 3-ի N 01.1/14-2/5870-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 3-ի N 06/3-4/16403-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-280-Ա որոշմամբ (2015 թվականի սեպտեմբերի 16-ի N Մ-1006-Ա, 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-035-Ա և մայիսի 20-ի N Մ-410-Ա, 2017 թվականի մարտի 23-ի N Մ-217-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մեդիամաքս մեդիա քոմփանի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00144609) 2018 թվականի մարտի 22-ին կնքված N 220318-Ն01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մարտի 22-ից մինչև հունիսի 22-ը 6 հատ ՍՄԱՐԹ կենտրոնի բացմանը նվիրված հոդվածի պատրաստում և հրապարակում՝ 750,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**6 ապրիլի 2018 թվականի N Մ- 244 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1 (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի ապրիլի 3-ի N 01.1/14-2/5872-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 5-ի N 06/3-4/16662-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-280-Ա որոշմամբ (2015 թվականի սեպտեմբերի 16-ի N Մ-1006-Ա, 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-035-Ա և մայիսի 20-ի N Մ-410-Ա, 2017 թվականի մարտի 23-ի N Մ-217-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Բոֆֆո» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00121699) 2018 թվականի մարտի 21-ին կնքված N ՍՄԱՐԹ-21/03/2018 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է լուսատուների մատակարարում՝ 5,769,430 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**6 ապրիլի 2018 թվականի N Մ- 245 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N Մ-1339-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի ապրիլի 3-ի N 01.1/14-2/5967-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 4-ի N 06/3-8/16661-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 4-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Տավուշի մարզի Իջևան քաղաքում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին» N Մ-1339-Ա որոշմամբ (2016 թվականի դեկտեմբերի 2-ի N Մ-1153-Ա և 2017 թվականի դեկտեմբերի 1-ի N Մ-1037-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Փըրֆեքթ աուդիտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02591995) 2018 թվականի մարտի 15-ին կնքված N 07-A/18 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2018 թվականի ապրիլի 15-ից մինչև հունիսի 30-ը աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 3,600,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ
6 ապրիլի 2018 թվականի N Մ- 246 - Ա
քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-1068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՏԱԹԵՎԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի ապրիլի 5-ի N 01.1/14-2/6163-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 4-ի N 06/3-8/16794-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տաթևի վերածնունդ» հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի «Տաթևի վերածնունդ» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-1068-Ա (2017 թվականի մարտի 10-ի N Մ-178-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պրոջեքթ Մենեջմենթ Յունիթ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00258778) 2018 թվականի մարտի 30-ին կնքված N 2297-280318 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2018 թվականի ապրիլի 1-ից մինչև 2019 թվականի մարտի 31-ը իրավաբանական և վարչական աջակցության իրականացում՝ 3,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

8

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**6 ապրիլի 2018 թվականի N Մ- 247 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի N Մ-086-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի ապրիլի 5-ի N 01.1/14-2/6164-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 5-ի N 06/3-8/16914-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ավրորա» միջազգային մարդասիրական մրցանակի շնորհում» ծրագրի մասին» N Մ-086-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սկավա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00025207) 2018 թվականի մարտի 19-ին կնքված N 2261-190318 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տարածքի չափագրություն՝ 100,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**6 ապրիլի 2018 թվականի N Մ- 248 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N Մ-1091-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի ապրիլի 3-ի N 01.1/14-2/5871-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 5-ի N 06/3-4/17016-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 1-ի «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից իրականացվող «Վայրի կենդանիների փրկարար, բազմացման և վերականգնողական կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1091-Ա որոշման 2-ին կետի 3-րդ ենթակետում «852,750 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի» բառերը փոխարինել «1,607,400 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**6 ապրիլի 2018 թվականի N Մ-249-Ա**
**քաղ. Երևան**

## «ԿԱՁԱ» ՇՎԵՅՑԱՐԱԿԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՍԻՐԻԱՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 15-ի N 01.1/14-2/4622-18, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 19-ի N 06/3-8/13176-18 և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2018 թվականի մարտի 17-ի N 02/14/4715-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «ԿԱՁԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Թումանյան 24, բն. 5, ՀՎՀՀ՝ 02554941) իրականացվող՝ 1,535,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Սիրիահայ երիտասարդների ինտեգրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «ԿԱՁԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի կողմից կընքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի հետ (ՀՎՀՀ՝ 01511187) 2018 թվականի մարտի 6-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացների կազմակերպման և անցկացման աշխատանքների իրականացում՝ 1,535,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «ԿԱՁԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակեր-



պության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԿԱՋԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի
տնօրեն Տաթևիկ Բաղդասարյանի կողմից

---

«28» մարտի, 2018թ.

# «ՍԻՐԻԱՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Սույն ծրագրի նպատակն է խթանել սիրիահայերի և տեղացի հայերի միջև երկխոսությունը, ինչպես նաև սիրիահայերի սոցիալ-տնտեսական ինտեգրումը:<br>Հաշվի առնելով սիրիահայ երիտասարդների հատուկ կրթական կարիքները և նրանց ռեսուրսների սակավությունը, ծրագիրը հնարավորություն է տալիս սիրիահայերին մասնակցել Հայաստանի Ամերիկյան Համալսարան հիմնադրամի ընդլայնված դասընթացներին:<br>Այսպիսով, ստանալով համապատասխան վերապատրաստում, սիրիահայ երիտասարդները ավելի հեշտ մուտք կգործեն Հայաստանի աշխատաշուկա և կրթական հաստատություններ: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Կոմիտաս Շվեյցարիա- Հայաստան բարեգործական միություն (Komitas Action Suisse-Armenie) - Ռոզիերի 7, ք. Լոզան 1012, Շվեյցարիա: |
| 4. | Ծրագիրը կատարողը | «ԿԱՋԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամ (ՀՀ, ք. Երևան, Թումանյան 24, բն. 5, ՀՎՀՀ՝ 02554941) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ ք. Երևան, Հայաստանի Ամերիկյան Համալսարան հիմնադրամ, կրթության բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջե | Ծրագրի բյուջեն կազմում է 1,535,000 (մեկ միլիոն հինգ հարյուր երեսունհինգ հազար) դրամ: Ծրագիրը ֆինանսավորվում է «Կոմիտաս» Շվեյցարիա- Հայաստան բարեգործական միության կողմից: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Սիրիահայ 20 երիտասարդներ, ովքեր պլանավորում են ընդունվել Ամերիկյան համալսարան և երիտասարդներ, ովքեր աշխատում են մասնագիտությամբ, որտեղ անգլերենի լավ իմացությունը պարտադիր է: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Սկիզբը՝ 2018թ. մարտի 1, ավարտը՝ 2018թ. դեկտեմբերի 30: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսվում է ֆինանսավորել դասընթացի հետևյալ տեսակները.<br>• թեստի և քննության նախապատրաստում,<br>• լեզուների ուսուցում,<br>• բիզնեսի, կառավարման և ձեռներեցության դասընթաց, |



| | | |
|---|---|---|
| | | • կարիերայի աճի և զարգացման դասընթաց,<br>• գրագրության, խմբագրման և տեխնիկական համագործակցության դասընթաց,<br>• հաղորդակցության և վարքագծային հմտությունների դասընթաց,<br>• սոցիալական ուսումնասիրություններ և գլոբալ հարցեր,<br>• տեխնոլոգիաներ և տեղեկատվական ծառայություններ,<br>• հատուկ դասեր և ծրագրեր:<br>Դասընթացների ընդհանուր արժեքը՝ 1,535,000 (մեկ միլիոն հինգ հարյուր երեսունհինգ հազար): |
| 10. | Ձեռք բերվելիք ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Հայաստանի Ամերիկյան Համալսարան հիմնադրամի կողմից դասընթացների կազմակերպման ծառայությունների մատուցում՝ 1,535,000 (մեկ միլիոն հինգ հարյուր երեսունհինգ հազար) դրամ ընդհանուր արժողությամբ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր | Ծրագրի բյուջեում չեն ներառվում ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Հայաստանի Ամերիկյան Համալսարան հիմնադրամի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի, Կոմիտաս Շվեյցարիա-Հայաստան բարեգործական միության կողմից: |

Ծրագիրը կազմեց՝

(ազգանունը, անունը) (ստորագրություն)

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**6 ապրիլի 2018 թվականի N Մ-250-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀՆԳԱՄԱՐՏԻ ԱԶԳԱՅԻՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 30-ի N 01.1/14-2/5852-18, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 3-ի N 06/3-8/16195-18 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2018 թվականի մարտի 29-ի N 1/06/469-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել ժամանակակից հնգամարտի միջազգային միության (UIPM) կողմից որպես օժանդակություն «Հայաստանի ժամանակակից հնգամարտի ազգային ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված մարզագույքի (2 տեղ, 26 կգ ընդհանուր քաշով, 3,000 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 550 եվրո, «Արևմտյան» ՄՎ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ժամանակակից հնգամարտի ազգային ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**6 ապրիլի 2018 թվականի N Մ-251-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N Մ-261-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 21-ի N 01.1/14-2/5121-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 23-ի N 06/3-8/14239-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված հուշանվերները և կրծքանշանները (մեկ տեղ, 168 կգ ընդհանուր քաշով, 8,550 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 300 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՄՎ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ֆուտբոլի զարգացմանը» ծրագրի մասին» N Մ-261-Ա որոշմամբ հաստատված (2016 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1222-Ա և 2017 թվականի դեկտեմբերի 1-ի N Մ-1073-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**6 ապրիլի 2018 թվականի N Մ-252-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N Մ-1147-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 28-ի N 01.1/14-2/5603-18, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 30-ի N 06/3-8/15950-18 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2018 թվականի ապրիլի 3-ի N ԱՊ/ԱնՄ-2-1/3420-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված սննդամթերքը (բրինձ՝ 22,000 կգ քաշով, 1,342,000 ռուսական ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ԵՏՄ» բեռ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 22-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքային ու գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին» N Մ-1147-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն [illegible] Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հ[illegible] Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն[illegible] Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտնե[illegible]:

ՆԱԽԱԳԱՀ | Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

*Բեռի բաշխման ցանկ*

հիվոյս N 16 15.03.2018

| NN | Ապրանքի անվանում | Շահառուներն ըստ մարզերի | Շահառուների քանակը | | Շահառուներին բաշխվող քանակը (կգ) | Արժեքն ըստ փաթեթների (ռուսական ռուբլի) |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Բրինձ | Գեղարքունիքի մարզ | Գետիկ | 138 | 759 | 46.299 |
| | | | Այգուտ | 138 | 759 | 46.299 |
| | | | Մարտունի | 68 | 374 | 22.814 |
| | | | Դպրաբակ | 59 | 325 | 19.795 |
| | | | Վահան | 172 | 946 | 57.706 |
| | | | Կալավան | 22 | 121 | 7.381 |
| | | | Բարեպատ | 5 | 28 | 1.678 |
| | | | Զոլավանք | 22 | 121 | 7.381 |
| | | | Լճաշեն | 46 | 253 | 15.433 |
| | | | Աղբերք | 43 | 237 | 14.427 |
| | | | Ճամբարակ | 152 | 836 | 50.996 |
| | | | Անտառամեջ | 12 | 66 | 4.026 |
| | | | Գավառ | 18 | 99 | 6.039 |
| | | | Թթուջուր | 128 | 704 | 42.944 |
| | | Արմավիրի մարզ | Այաշկերտ | 29 | 160 | 9.730 |
| | | | Գեղակերտ | 64 | 352 | 21.472 |
| | | | Արտաշատ | 42 | 231 | 14.091 |
| | | Արարատի մարզ | Վեդի | 11 | 61 | 3.691 |
| | | | Արտաշատ | 16 | 88 | 5.368 |
| | | | Գետազատ | 19 | 105 | 6.375 |
| | | | Վարդաշեն | 2 | 11 | 671 |
| | | | Մրգանուշ | 8 | 44 | 2.684 |
| | | Կոտայքի մարզ | Չարենցավան | 36 | 198 | 12.078 |
| | | | Աբովյան | 54 | 297 | 18.117 |
| | | Վայոց ձորի մարզ | Շատին | 20 | 110 | 6.710 |
| | | Լոռու մարզ | Վանաձոր | 30 | 165 | 10.065 |
| | | Արագածոտնի մարզ | Թալին | 42 | 231 | 14.091 |
| | | | Ակունք | 33 | 182 | 11.072 |
| | | Տավուշի մարզ | Իջևան | 20 | 110 | 6.710 |
| | | Երևան | | 2551 | 14027 | 855.861 |
| | Ընդամենը | | | 4000 | 22000 | 1.342.000 |

*«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի նախագահ* Բ. Զամբազյան

4/Բ 11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**6 ապրիլի 2018 թվականի N Մ-253-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1439-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 15-ի N 01.1/14-2/4624-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 19-ի N 06/3-8/13200-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02554563) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություններում ծառատունկի իրականացում» ծրագրի մասին» N Մ-1439-Ա որոշմամբ հաստատված ծրագրի (2016 թվականի մարտի 18-ի N Մ-207-Ա որոշման խմբագրությամբ) իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արշանդ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00856074) 2018 թվականի փետրվարի 27-ին կնքված՝ N 110 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պոլիէթիլենային խողովակների և կցամասերի ձեռքբերում՝ 1,200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**6 ապրիլի 2018 թվականի N Մ-254-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1435-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 30-ի N 01.1/14-2/5850-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 29-ի N 06/3-8/15589-18 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրի քաղաքի հին թատրոնի շենքի ու հարակից տարածքի վերակառուցման, վերանորոգման և բարեկարգման» ծրագրի մասին» N Մ-1435-Ա որոշմամբ հաստատված (2017 թվականի օգոստոսի 11-ի N Մ-700-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ինթեք էլեկտրիկ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00870691) հետ 2018 թվականի մարտի 16-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է էլեկտրական սարքավորումների և նյութերի մատակարարում՝ 27,513,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**6 ապրիլի 2018 թվականի N Մ-255-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-018-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 23-ի N 01.1/14-2/5324-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 23-ի N 06/3-8/14169-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոններ» ծրագրի մասին» N Մ-018-Ա որոշմամբ հաստատված (2017 թվականի սեպտեմբերի 8-ի N Մ-731-Ա, դեկտեմբերի 22-ի N Մ-1157-Ա և 2018 թվականի մարտի 7-ի N Մ-135-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Pixologic. Inc» ընկերության հետ (6410 Santa Monica Blvd. Bldg 10 Los Angeles, CA 90038) 2018 թվականի մարտի 6-ի գնառաջարկով իրականացվող գործարքը, որով նախատեսվում է համակարգչային ծրագրի արտոնագրի ձեռքբերում՝ 7,536.67 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Օֆիս պրո» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00861435) 2018 թվականի մարտի 7-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նշումների թերթիկների ձեռքբերում՝ 620,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**6 ապրիլի 2018 թվականի N Մ-256-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-018-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ N 1

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 30-ի N 01.1/14-2/5846-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 30-ի N 06/3-8/16092-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոններ» ծրագրի մասին» N Մ-018-Ա որոշմամբ հաստատված (2017 թվականի սեպտեմբերի 8-ի N Մ-731-Ա, դեկտեմբերի 22-ի N Մ-1157-Ա և 2018 թվականի մարտի 7-ի N Մ-135-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) Ֆրանսիայի Հանրապետության քաղաքացի Լոիկ Գոյոնի հետ (անձնագիր՝ 11CZ18004) 2018 թվականի փետրվարի 21-ին կնքված՝ N 01-21.02.2018 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 820,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) ՌԴ քաղաքացի Մարկ Ամիրաղյանի հետ (անձնագիր՝ 55 0022121) 2018 թվականի մարտի 5-ին կնքված՝ N 01-05.03.2018 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացավարների օգնության ծառայությունների մատուցում՝ 720,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.



3) «Ինֆորմատիկ սոլուշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00061961) 2018 թվականի մարտի 15-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգչային տպիչի ժապավենների ձեռքբերում՝ 331,200 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Ռեդ-փունթ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03312103) 2018 թվականի մարտի 21-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տպագրական աշխատանքների իրականացում՝ 224,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**6 ապրիլի 2018 թվականի N Մ-257-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-1019-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 23-ի N 01.1/14-2/5260-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 23-ի N 06/3-8/14168-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի նոյեմբերի 24-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո ստուդիաներ» ծրագրի մասին» N Մ-1019-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

Գերմանիայի Դաշնային Հանրապետության քաղաքացի Ստեֆանի Միթմանի հետ (անձնագիր՝ C3JJ6JYHJ) 2018 թվականի փետրվարի 20-ին կնքված՝ N 02-20.02.18 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 850,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ | Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**6 ապրիլի 2018 թվականի N Մ-258-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-1019-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 30-ի N 01.1/14-2/5815-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 29-ի N 06/3-8/15590-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի նոյեմբերի 24-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո ստուդիաներ» ծրագրի մասին» N Մ-1019-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

Իսպանիայի Թագավորության քաղաքացի Լայա Վարելայի հետ (անձնագիր՝ AAI057785) 2018 թվականի փետրվարի 20-ին կնքված՝ N 03-20.02.18 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 850,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**6 ապրիլի 2018 թվականի N Մ-259-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N Մ-1060-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 23-ի N 01.1/14-2/5332-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 26-ի N 06/3-8/14780-18 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից (ՀՎՀՀ՝ 02566915) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Բանանց» ֆուտբոլային ակումբի համար խաղադաշտի արհեստական խոտածածկի ներմուծում և տեղադրում» ծրագրի մասին» N Մ-1060-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Edel Grass B.V.» ընկերության հետ (Fabrieksstraat 13, 8280 AD Genemuiden, the Netherlands) 2018 թվականի մարտի 6-ին կնքված՝ N 68350306ED պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է արհեստական խոտածածկի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 19,800 եվրոյին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**6 ապրիլի 2018 թվականի N Մ-260-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 11-Ի N Մ-700-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 23-ի N 01.1/14-2/5259-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 26-ի N 06/3-8/14768-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի օգոստոսի 11-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-1435-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու և նույն որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» N Մ-700-Ա որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում «830,611,120 դրամի չափով» բառերը փոխարինել «850,970,320 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**6 ապրիլի 2018 թվականի N Մ-261-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի ապրիլի 3-ի N 01.1/14-2/5981-18 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 3-ի N 06/3-8/16413-18 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2018 թվականի մարտի 30-ի N ՆՁ/22.1/3677-18 միջնորդագիրը,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ԱՄՆ-ի «Մաքս» հիմնադրամի միջոցով, քրոնիկ միելոլեյկոզ հիվանդությամբ տառապող հիվանդներին անհատույց տրամադրելու նպատակով, ուղարկված 6 տուփ «Iclusig 15 մգ N 60» դեղի (մեկ տեղ, 3.5 կգ ընդհանուր քաշով, 3 ֆունտ ստերլինգին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արևմտյան» ՄՎ) ներմուծման և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Պրոֆեսոր Ռ. Հ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության անհատույց հատկացման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի հանձնումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**6 ապրիլի 2018 թվականի N Մ-262-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N Մ-261-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի ապրիլի 3-ի N 01.1/14-2/5972-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 4-ի N 06/3-8/16646-18 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված խաղադաշտի խոտի սերմը, նշագծման նյութերը, պարարտանյութը և խոտի մշակման տեխնիկայի պահեստամասերը (մեկ տեղ, 13,729 կգ ընդհանուր քաշով, 44,148.12 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՄՎ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ֆուտբոլի զարգացմանը» ծրագրի մասին» N Մ-261-Ա որոշմամբ հաստատված (2016 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1222-Ա և 2017 թվականի դեկտեմբերի 1-ի N Մ-1073-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն [illegible] Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայա[illegible]ության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմի[illegible]

ՆԱԽԱԳ[illegible] Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**6 ապրիլի 2018 թվականի N Մ-263-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N Մ-261-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-ՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 2

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի ապրիլի 3-ի N 01.1/14-2/5971-18 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 4-ի N 06/3-8/16645-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված ֆիթնես ցուցանիշների բազմաֆունկցիոնալ չափիչ հավաքածուն (մեկ տեղ, 6 կգ ընդհանուր քաշով, 12,000 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արևմտյան» ՄՎ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ֆուտբոլի զարգացմանը» ծրագրի մասին» N Մ-261-Ա որոշմամբ հաստատված (2016 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1222-Ա և 2017 թվականի դեկտեմբերի 1-ի N Մ-1073-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**6 ապրիլի 2018 թվականի N Մ-264-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի N Մ-201-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի ապրիլի 4-ի N 01.1/14-2/6143-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 3-ի N 06/3-8/16196-18 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2018 թվականի մարտի 16-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Տաշիր քաղաքի մշակույթի տան հիմնանորոգում» ծրագրի մասին» N Մ-201-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արարատցեմենտ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04000255) 2018 թվականի մարտի 23-ին կնքված՝ N 24-Լ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 200 տոննա ցեմենտի ձեռքբերում՝ 8,333,334 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաս[illegible]տության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե[illegible]

ՆԱԽԱԳԱ[illegible] Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**6 ապրիլի 2018 թվականի N Մ-265-Ա
քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-Ի N Մ-549-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի ապրիլի 4-ի N 01.1/14-2/6144-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 5-ի N 06/3-8/16916-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 23-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Արմավիր քաղաքի «Հոբելյանական» մարզադաշտի վերակառուցում» ծրագրի մասին» N Մ-549-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «321,378,262 դրամ» բառերը փոխարինել «668,286,598 դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մետաղական կառուցվածքների գործարան» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00405482) 2018 թվականի մարտի 22-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մետաղական կառուցվածքների պատրաստման և շինության ուժեղացման աշխատանքների իրականացում՝ 29,554,952 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:



3. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված մետաղական կառուցվածքները (44 տեղ, 141,576 կգ ընդհանուր քաշով, 7,119,359.50 ռուսական ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ԵՏՄ» բեռ) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության նախագահ Ռ. Հայրապետյանի կողմից

«05» ապրիլի 2018 թ.

«Արմավիր քաղաքի «Հոբելյանական» մարզադաշտի վերակառուցում»

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Արմավիր մարզի տարածաշրջանում ֆուտբոլի զարգացման և մասսայականացման նպատակով Արմավիր քաղաքային համայնքի, Հանրապետության փողոց 130 հասցեում «Հոբելյանական» մարզադաշտի վերակառուցում ու կահավորում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Եվրոպայի ֆուտբոլի ասոցացիաների միություն – (UEFA-Շվեյցարիա, Նիոն) և Ֆուտբոլի ասոցացիաների միջազգային ֆեդերացիա - (FIFA - Շվեյցարիա, Ցյուրիխ): |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվում է Արմավիր քաղաքային համայնքում, սպորտի բնագավառում: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 668,286,598 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությունը (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915)՝ ի դեմս Արմավիր քաղաքային համայնքի, Հանրապետության փողոց 130 հասցեում վերակառուցվող «Հոբելյանական» մարզադաշտի: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է կատարել 2017 թվականի հունիսի 7-ից մինչև 2019 թվականի հունիսի 30-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Մարզադաշտի և ենթակառույցների վերակառուցման ընդհանուր շինարարական ու կահավորման աշխատանքներ՝ 290,720,290 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2017 թվականի հունիսի 7-ից մինչև 2019 թվականի հունիսի 30-ը: *2018 թվականի մարտի 31-ի դրությամբ փաստացի իրականացվել է 60,720,290 դրամ արժողությամբ աշխատանքներ:*<br>2. Ոռոգման համակարգերի նախագծման և պոմպի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 13,616,200 դրամ արժողությամբ, նախատեսված էր իրականացնել 2017 թվականի հունիսի 7-ից մինչև 2018 թվականի հունիսի 30-ը *(փաստացի կատարված է՝ հարկային արտոնություններ չեն ակնկալվել)*:<br>3. Խաղադաշտերի կառուցում՝ 79,808,[illegible] արժողությամբ, նախատեսված էր իրականացնել 2017 թվականի հունիսի 7-ից մինչև 2018 [illegible] *(փաստացի կատարված է)*:<br>4. Արհեստական խոտածածկի [illegible] իրականացում՝ 9,592,000 դրամ արժողությամբ. նախատեսված էր [illegible] 2017 [illegible] հունիսի 7-ից մինչև 2018 թվականի հունիսի 30-ը *(փաստացի կատարվ*[illegible]<br>*5.* Շինարարական նյութերի, [illegible] սարքավորումների, խոտի սերմի և պարարտանյութերի, [illegible] գնդիկների, արհեստական խոտածածկի մարզագույքի, [illegible] տեխնիկայի, կվարցային ավազի |



| | | |
|---|---|---|
| | | ներմուծում՝ 274,549,148 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2017 թվականի հունիսի 7-ից մինչև 2019 թվականի հունիսի 30-ը: *2018 թվականի մարտի 31-ի դրությամբ փաստացի իրականացվել է 97,383,663 դրամ արժողությամբ ներմուծում:* |
| 10. | Չեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | - մարզադաշտի և ենթակառուցվածքների վերակառուցման շինարարական ու կահավորման աշխատանքների իրականացում՝ 276,225,971 դրամ,<br>- պոմպակայանի շինարարական աշխատանքների իրականացում՝ 14,494,319 դրամ,<br>- ոռոգման համակարգերի նախագծման և պոմպի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 13,616,200 դրամ (հարկային արտոնություններ չեն ակնկալվում),<br>- մեկ ստանդարտ չափի խաղադաշտի շինարարական աշխատնքների իրականացում՝ 32,874,810 դրամ,<br>- մեկ արհեստական խոտածածկով խաղադաշտի հիմք դրենաժային համակարգի կառուցում՝ 46,934,150 դրամ,<br>- արհեստական խոտածածկի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 9,592,000 դրամ,<br>- շինանյութի՝ 100,000,000 դրամ, կահավորանք՝ 10,000,000 մարզագույքի՝ 5,000,000 դրամ, խաղադաշտի խնամքի սարքավորումների՝ 25,000,000 դրամ, խոտի սերմի և պարարտանյութերի՝ 20,000,000 դրամ ներմուծում, փոխադրման ծախսերը կկազմեն՝ 20,000,000 դրամ,<br>- խաղադաշտի արհեստական խոտածածկի (տեղադրման նյութերով և պարագաներով)՝ 52,019,346 դրամ, արհեստական խոտածածկի մշակման տեխնիկայի 5,769,725 դրամ, մարզագույքի՝ 3,056,547 դրամ ներմուծում. փոխադրման ծախսերը կազմել են 6,255,645 դրամ,<br>- արհեստական խոտածածկի ռետինե գնդիկներ՝ 9,804,352 դրամ ներմուծում. փոխադրման ծախսերը կազմել են՝ 14,355,770 դրամ,<br>- կվարցային ավազի՝ 3,287,763 դրամ ներմուծում. ներառյալ փոխադրման ծախսերը: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցություն Արմավիրի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը կիրականացվի ՖԻՖԱ-ի (ֆինանսական աուդիտ) և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի հետ: |

Կազմեց՝ Ծրագրի ֆինանսական պատասխանատու Հայկ Մակարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**06 ապրիլի 2018 թվականի N Մ-266- Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N Մ-267-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ** («Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 17-ի N 01.1/14-2/4799-18, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2018 թվականի մարտի 20-ի N ՆՁ/22.2/3161-18 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մարտի 21-ի N 06/3-8/13690-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ ՀԱՆ-ի հիմնադիր «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական գրասենյակի կողմից ձեռք բերված «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի հասցեով՝ Մանկական կուրության կանխարգելման գերազանցության կենտրոնի համար ստացված բեռը (վիրահատական պարագաներ՝ 1 տեղ, 2.70 կգ ընդհանուր քաշով, 3,591 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Լույս՝ հայի աչքերին» (ութերորդ փուլ) ծրագրի մասին» N Մ-267-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**06 ապրիլի 2018 թվականի N Մ-267- Ա**

**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ԿՈՎԿԱՍԻ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ԶԱՆԳԵԶՈՒՐ» ԿԵՆՍՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ-Ի ՄԻՋԵՎ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-ԻՆ ԿՆՔՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ 2018 ԹՎԱԿԱՆԻ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2018 թվականի մարտի 21-ի N 5/08.2/50486-18 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 26-ի N 01.1/14-2/5443-18, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2018 թվականի մարտի 27-ի N 02/14/52173-18 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 28-ի N 06/3-8/15206-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից իրականացվող՝ 62,388,000 դրամ ընդհանուր արժեքով «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի միջև 2018 թվականի փետրվարի 28-ին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2018 թվականի» ծրագիրը (կցվում է):

2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-



ման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՀ բնապահպանության նախարարության
աշխատակազմի ղեկավարի կողմից
[illegible] Հովհաննիսյան
«29» «03» 2018թ.

# ԾՐԱԳԻՐ

**ՀՀ բնապահպանության նախարարության, Կովկասի Բնության Հիմնադրամի և «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի միջև 2018 թվականի փետրվարի-28 ին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2018 թվականի**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ում իրականացվելիք միջոցառումների ֆինանսավորման ծավալների (բյուջեի) համալրում՝ նպատակաուղղված կենսոլորտային համալիրի պահպանության բարելավմանը, ինչպես նաև «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի կանոնադրական խնդիրների ավելի արդյունավետ կատարմանը |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Կովկասի Բնության Հիմնադրամ, Թուլպենհոֆսշտրասսե 18, 63067 Օֆֆենբախ, Գերմանիա |
| 4. | Ծրագիրը կատարողը | ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմ |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Սյունիքի մարզ, գ.Շիկահող<br>«Բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանություն» |
| 6. | Ծրագրի բյուջեն | Կովկասի Բնության Հիմնադրամից ստացվելիք դրամական միջոցները մուտքագրվելու են «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի համար «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ում բացված հատուկ հաշվում՝ 62 388 000 ՀՀ դրամ (որից 1 413 000 ՀՀ դրամը նախորդ տարվա մնացորդն է)։<br>Ծախսերի ուղղությունները [illegible] ըստ կետ 9-ի: |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Զանգեզուր» կենսոլոր[illegible] համալիր» ՊՈԱԿ |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 20.03.2018թ. - 31.12.2018թ. |

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | ՀՀ բնապահպանության նախարարության, Կովկասի Բնության Հիմնադրամի և «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի միջև 28.02.2018թ. կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2018 թվականի ծրագիր՝ 20.03.2018թ. - 31.12.2018թ., բյուջեն - **62 388 000 ՀՀ դրամ,** այդ թվում՝ |

1. **Ծառայությունների ձեռքբերում - 7 653.0 հազար դրամ** (1-4 եռամսյակ), այդ թվում՝

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազար դրամ) |
|---|---|---|---|
| Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր | դրամ | 1 | 50.0 |
| Էներգետիկ ծառայություններ | դրամ | 1 | 900.0 |
| Կոմունալ ծառայություններ | դրամ | 1 | 150.0 |
| Կապի ծառայություններ | դրամ | 1 | 1032.0 |
| Ապահովագրական ծառայություններ | դրամ | 1 | 3150.0 |
| Ներքին գործուղումներ | դրամ | 1 | 800.0 |
| Համակարգչային ծառայություններ | դրամ | 1 | 145.0 |
| Ներկայացուցչական ծախսեր | դրամ | 1 | 600.0 |
| Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | դրամ | 1 | 826.0 |

2. **Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերում - 2 200.0 հազար դրամ** (1-4 եռամսյակ), այդ թվում՝

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազար դրամ) |
|---|---|---|---|
| Ավտոմեքենաների վերանորոգման և պահպանման ծառայություն | դրամ | 1 | 2 000.0 |
| Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություն | դրամ | 1 | 200.0 |

3. **Գրասենյակային նյութերի ձեռքբերում - 290.0 հազար դրամ** (1-4 եռամսյակ), այդ թվում՝

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանո մները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազար դրամ) |
|---|---|---|---|
| Գրասենյակային նյութեր | դրամ | 1 | 290.0 |

4. **Գյուղատնտեսական ապրանքների ձեռքբերում - 700.0 հազար դրամ** (2-4 եռամսյակ), այդ թվում՝

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանո մները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազար դրամ) |
|---|---|---|---|
| Գյուղատնտեսական ապրանքներ | դրամ | 1 | 700.0 |

5. **Տրանսպորտային նյութերի ձեռքբերում – 11 595.0 հազար դրամ** (1-4 եռամսյակ), այդ թվում՝

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազար դրամ) |
|---|---|---|---|
| Բենզին «Ռեգուլյար» | լիտր | 21000 | 9135.0 |
| Սեղմված բնական գազ | խմ | 9000 | 1620.0 |
| Շարժիչի յուղ | լիտր | 120 | 240.0 |
| Հակասառիչ հեղուկ | լիտր | 40 | 60.0 |
| Անիվներ | դրամ | 1 | 430.0 |
| Կուտակիչ մարտկոց | դրամ | 1 | 110.0 |

6. **Կենցաղային նյութերի ձեռքբերում - 200.0 հազար դրամ** (2-4-րդ եռամսյակ), այդ թվում՝

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազար դրամ) |
|---|---|---|---|
| Կենցաղային նյութեր | դրամ | 1 | 200.0 |

7. **Հատուկ նպատակային նյութերի ձեռքբերում - 300.0 հազար դրամ** (2-4 եռամսյակ), այդ թվում՝

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազար դրամ) |
|---|---|---|---|
| Շինարարական նյութեր | դրամ | 1 | 240.0 |
| Տնտեսող լամպեր | դրամ | 1 | 60.0 |

8. **«Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի անձնակազմի լրացուցիչ վարձատրություն (1-4 եռամսյակ) - 37 640.0 հազար դրամ:**
9. **Պարտադիր վճարներ և հարկային պարտավորություններ - 1 810.0 հազար դրամ:**

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Ծառայությունների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - **7 653.0 հազար դրամ:**<br>2. Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - **2 200.0 հազար դրամ:**<br>3. Գրասենյակային նյութերի ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - **290.0 հազար դրամ:**<br>4. Գյուղատնտեսական ապրանքների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - **700.0 հազար դրամ:**<br>5. Տրանսպորտային նյութերի ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - **11 595.0 հազար դրամ:**<br>6. Կենցաղային նյութերի ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - **200.0 հազար դրամ**<br>7. Հատուկ նպատակային նյութերի ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - **300 .0 հազար դրամ:** |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | **Կազմակերպչական և վարչարարական ծախսեր - 10013.0 հազար դրամ՝**<br>1. Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր - **50.0 հազար դրամ,**<br>2. Էներգետիկ ծառայություններ - **900.0 հազար դրամ,**<br>3. Կոմունալ ծառայություններ - **150.0 հազար դրամ,**<br>4. Կապի ծառայություններ - **1032.0 հազար դրամ,**<br>5. Ապահովագրական ծառայություններ - **3150.0 հազար դրամ,**<br>6. Ներքին գործուղումներ - **800.0 հազար դրամ,**<br>7. Համակարգչային ծառայություններ - **145.0 հազար դրամ,**<br>8. Ներկայացուցչական ծախսեր - **600.0 հազար դրամ,**<br>9. Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ - **826.0 հազար դրամ,**<br>10. Գրասենյակային նյութեր - **290.0 հազար դրամ,**<br>11. Կենցաղային նյութեր - **200.0 հազար դրամ,**<br>12. Հատուկ նպատակային նյութեր (տնտեսող լամպեր)- **60.0 հազար դրամ,**<br>13. Տրանսպորտային միջոցների տեխզննում - **810.0 հազար դրամ,**<br>14. Գույքահարկ - **1000.0 հազար դրամ:** |

| | | |
|---|---|---|
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի և ՀՀ Սյունիքի մարզպետարանի հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հաշվետվություն է ներկայացվում բարեգործին, ինչպես նաև սահմանված կարգով տեղեկատվություն է ներկայացվում ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին և ՀՀ բնապահպանության նախարարությանը: |

«Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրեն Վ. Գևորգյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**06 ապրիլի 2018 թվականի N Մ-268-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 30-ի N 01.1/14-2/5845-18 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 3-ի N 06/3-8/16417-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Բարեգործական որակել «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության հասցեով Ավստրիայից, «Ավստրիական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից, որպես նվիրատվություն, «Էմիլի-Արեգակ» բազմակի հաշմանդամություն ունեցող երեխաների ցերեկային խնամքի կենտրոնի համար ստացված բեռի («26631 Blueplanet 20.0 TL3 M2 INT-SPD Krannich» մակնիշի հոսանքի փոխարկիչ՝ 1 տեղ, 40 կգ քաշով, 2,315.94 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 150 եվրո, «Հյուսիսային» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**06 ապրիլի 2018 թվականի N Մ-269- Ա**

**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ԿՈՎԿԱՍԻ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ԱՐՓԻ ԼԻՃ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ» ՊՈԱԿ-Ի ՄԻՋԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 17-ԻՆ ԿՆՔՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2018 թվականի մարտի 26-ի N 01.1/80-2/50523-18 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի ապրիլի 3-ի N 01.1/14-2/6024-18, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2018 թվականի մարտի 29-ի N 02/14/52360-18, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության 2018 թվականի մարտի 29-ի N 04/15.1/ 1950-18, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 3-ի N 06/3-8/16164-18 ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2018 թվականի մարտի 29-ի N 01/1833-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ   է.***

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից իրականացվող՝ 72,054,700 դրամ ընդհանուր արժեքով «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 2016 թվականի մարտի 17-ին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2018 թվականի» ծրագիրը (կցվում է):

2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.



2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀՀ բնապահպանության նախարարության
աշխատակազմի ղեկավարի կողմից
Հ.Հովհաննիսյան
«22» մարտ 2018թ.

# ԾՐԱԳԻՐ

**ՀՀ բնապահպանության նախարարության, Կովկասի Բնության Հիմնադրամի և «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 2016 թվականի մարտի 17-ին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2018 թվականի**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Արփի լիճ» ազգային պարկում իրականացվելիք միջոցառումների ֆինանսավորման ծավալների (բյուջեի) համալրում՝ նպատակաուղղված պետական արգելոցի պահպանության բարելավմանը, ինչպես նաև «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կանոնադրական խնդիրների ավելի արդյունավետ կատարմանը |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Կովկասի Բնության Հիմնադրամ, Թուլպենհոֆշտրասսե 18, 63067 Օֆֆենբախ, Գերմանիա |
| 4. | Ծրագրի կատարող | ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմ |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Շիրակի մարզ, գ.Բերդաշեն<br>«Բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանություն» |
| 6. | Ծրագրի բյուջեն | Կովկասի Բնության Հիմնադրամից ստացվելիք դրամական միջոցները մուտքագրվելու են «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի համար «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ում բացված հատուկ հաշվում՝ **72 054 700 ՀՀ դրամ**): Ծախսերի ուղղությունները և չափերը՝ ըստ կետ 9-ի: |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 22.03.2018թ. – 31.12.2018թ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | ՀՀ բնապահպանության նախարարության, Կովկասի Բնության Հիմնադրամի և «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 17.03.2016թ. կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2018 թվականի ծրագիր 22.03.2018թ. – 31.12.2018թ. – **72 054 700 ՀՀ դրամ**, այդ թվում՝ |

1. Գյուղատնտեսական ապրանքներ (3-րդ - 4-րդ եռամսյակ) – **1800.0 հազ. ՀՀ դրամ**, այդ թվում՝

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազ, դրամ) |
|---|---|---|---|
| Անասնակեր /գարի/ | կգ | 6923 | 900.0 |
| Անասնակեր /խոտ/ | հատ | 1500 | 900.0 |

2. Տրանսպորտային նյութերի ձեռքբերում (2-րդ - 4-րդ եռամսյակ) – **3470. 0 հազ. ՀՀ դրամ**, այդ թվում՝

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազ, դրամ) |
|---|---|---|---|
| Բենզին <Ռեգուլյար> | լիտր | 4000.0 | 1 740.0 |
| Դիզելային վառելիք/ամառային/ | լիտր | 500.0 | 215.0 |
| Դիզելային վառելիք/ձմեռային/ | լիտր | 500.0 | 215.0 |
| Շարժիչի յուղ | լիտր | 40.0 | 80.0 |
| Անիվներ | հատ | 12.0 | 420.0 |
| Բնական գազ | դրամ | 4000 | 800.0 |

3. Հատուկ նպատակային նյութերի ձեռքբերում (2-րդ - 4-րդ եռամսյակ) – **1250.0 հազ. ՀՀ դրամ**, այդ թվում՝

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազ, դրամ) |
|---|---|---|---|
| LED լամպեր | հատ | 150 | 300.0 |
| Շինանյութեր երկաթյա պարիսպների համար | հատ | 1 | 843.3 |
| Շինանյութեր թռչնադիտարկման կետի համար | հատ | 1 | 106.7 |

4. Կենցաղային նյութերի ձեռքբերում (2-րդ - 4-րդ եռամսյակ)- **50.0 հազ. ՀՀ դրամ, այդ թվում՝**

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազ. դրամ) |
|---|---|---|---|
| Հատակ մաքրելու պլաստմասե ձող դույլով | հատ | 2 | 9.7 |
| Զուգարանի թուղթ | հատ | 100 | 12.0 |
| Հեղուկ օճառ | լիտր | 25 | 25.0 |
| Ախտահանող հեղուկ սանհանգույցի համար | հատ | 5 | 1.40 |
| Ապակի մաքրելու միջոց | հատ | 5 | 1.90 |

5. Հագուստի ձեռքբերում (2-րդ - 4-րդ եռամսյակ) – **2650.0 հազ. ՀՀ դրամ,** այդ թվում՝

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազ. դրամ) |
|---|---|---|---|
| Արտահագուստ պահպանության բաժնի համար (վերարկու, ճտքավոր կոշիկներ, ձեռնոց, բաճկոն, ակնոց, ամառային և ձմեռային գլխարկ, ամառային և ձմեռային շապիկ) | հատ | 15 | 1800.00 |
| Գոտի՝ սարքավորումներով (լապտեր, ձեռնափայտ, ջրաման, դանակ, սփրեյ, էլեկտրաշոկ և այլն) | հատ | 10 | 500.0 |
| Արտահագուստ գիտության և էկոտուրիզմի աշխատողների համար (տաբատ, վերնաշապիկ, բաճկոն, արևային գլխարկ) | հատ | 5 | 350.0 |

6. Ծառայությունների ձեռքբերում (1-ին - 4-րդ եռամսյակ) – **5 554.7 հազ. ՀՀ դրամ, այդ թվում՝**

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազ. դրամ) |
|---|---|---|---|
| Գործառնական և բանկային | Դրամ | 1.0 | 11.7 |
| Էլեկտրաէներգիա | դրամ | 1.0 | 1500.0 |
| Ջրամատակարարում և աղբահանում | դրամ | 1.0 | 320.0 |
| Միջազգային և միջքաղաքային հեռախոսային ծառայություն | դրամ | 1.0 | 50.0 |
| Հանրային հեռախոսային ցանց | դրամ | 1.0 | 200.0 |
| Բջջային հեռախոսների ծառայություններ | դրամ | 1.0 | 250.0 |
| Համացանց | դրամ | 1.0 | 950.0 |
| Փոստային ծառայություններ | դրամ | 1.0 | 50.0 |
| Ավտոմեքենաների նորոգում | դրամ | 1.0 | 845.0 |
| Գրասենյակային սարքավորումների ընթացիկ նորոգում | դրամ | 1.0 | 150.0 |
| Առողջապահության ապահովագրական ծառայություններ | դրամ | 1.0 | 825.0 |
| Հաշվապահական համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայություններ | դրամ | 1.0 | 145.0 |
| Նավիգացիոն ծառայություններ | դրամ | 1.0 | 258.0 |

7. Շենքերի և շինությունների կառուցում (2-րդ-3-րդ եռամսյակ )- **24 000.0 հազ. ՀՀ դրամ:**

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազ. դրամ) |
|---|---|---|---|
| Պասիվ ջերմոցի կառուցում | դրամ | 1.0 | 11 000.0 |

<table>
<tr><td></td><td></td><td>
<table>
<tr><td>Ախուրյան գետի հին հունի վրա նոր պատվարի կառուցում և հին պատվարի վերականգնում</td><td>դրամ</td><td>1.0</td><td>3000.0</td></tr>
<tr><td>Արևային կայանի կառուցում</td><td>դրամ</td><td>1</td><td>10 000.0</td></tr>
</table>
8. Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ(2-րդ -3-րդ եռամսյակ )- 950.0 հազ. ՀՀ դրամ
<table>
<tr><th>Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները</th><th>Չափի միավորը</th><th>Ամբողջ քանակը (ծավալը)</th><th>Ընդհանուր գումարը (հազ. դրամ)</th></tr>
<tr><td>Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ</td><td>դրամ</td><td>1.0</td><td>950.0</td></tr>
</table>
9. Վարչական և այլ սարքավորումների ձեռքբերում (2-րդ -3-րդ եռամսյակ)՝- 19 050.0 հազ. ՀՀ դրամ
<table>
<tr><th>Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները</th><th>Չափի միավորը</th><th>Ամբողջ քանակը (ծավալը)</th><th>Ընդհանուր գումարը (հազ, դրամ)</th></tr>
<tr><td>Ֆոտոթակարդ Bushnell (կամ համարժեք) GSM համակարգով</td><td>հատ</td><td>6.0</td><td>1800.0</td></tr>
<tr><td>Էլեկտրական շարժիչով նավակ</td><td>հատ</td><td>1.0</td><td>3 000.0</td></tr>
<tr><td>Ջրաչափ սարք՝ Արփի լճի պատվարի վրա</td><td>հատ</td><td>1.0</td><td>3 000.0</td></tr>
<tr><td>Տեսահսկման համակարգ</td><td>հատ</td><td>1</td><td>11 250.0</td></tr>
</table>
10. «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի անձնակազմի լրացուցիչ վարձատրություն (խրախուսում) – 13 280.0 հազ. ՀՀ դրամ (յուրաքանչյուր եռամսյակ):
</td></tr>
<tr><td>10.</td><td>Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</td><td>1. Գյուղատնտեսական ապրանքներ (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) – 1800.0 հազ. ՀՀ դրամ<br>2.Տրանսպորտային նյութերի ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) – 3 470.0 հազ. ՀՀ դրամ<br>3.Հատուկ նպատակային նյութերի ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում)– 1250.0 հազ. ՀՀ դրամ</td></tr>
</table>

<table>
<tr><td></td><td></td><td>4. Կենցաղային նյութերի ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) -50.0 հազ. ՀՀ դրամ<br>5. Հագուստի ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) – 2650.0 հազ. ՀՀ դրամ,<br>6. Ծառայությունների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) – 5554.7 հազ. ՀՀ դրամ<br>7. Շենքերի և շինությունների կառուցում,վերանորոգում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) – 24 000.0 հազ. ՀՀ դրամ<br>8. Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում)- 950.0 հազ. ՀՀ դրամ<br>9. Վարչական և այլ սարքավորումների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - 19050.0 հազ. ՀՀ դրամ</td></tr>
<tr><td>11.</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը</td><td>Կազմակերպչական ծախսեր –7901.7 հազ. ՀՀ դրամ<br>1. Հատուկ նպատակային և կենցաղային նյութեր – 1300.0 հազ. ՀՀ դրամ<br>2. Ծառայությունների ձեռքբերում -4451.7 հազ.ՀՀ դրամ<br>3. Հագուստի ձեռքբերում-2 150.0 հազ. ՀՀ դրամ</td></tr>
<tr><td>12.</td><td>Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ</td><td>ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի և ՀՀ Շիրակի մարզպետարանի հետ</td></tr>
<tr><td>13.</td><td>Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը</td><td>Հաշվետվություն է ներկայացվում բարեգործին, ինչպես նաև սահմանված կարգով տեղեկատվություն է ներկայացվում ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին և ՀՀ բնապահպանության նախարարությանը</td></tr>
</table>

«Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Հ.Սիմոնյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**06 ապրիլի 2018 թվականի N Մ-270- Ա**

**քաղ. Երևան**

## ՖՐԱՆՍԻԱՅԻ «ԲԺԻՇԿՆԵՐ՝ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ» ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 30-ի N 01.1/14-2/5814-18, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2018 թվականի մարտի 28-ի N 02/14/52283-18, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2018 թվականի մարտի 28-ի N ՆՁ/22.2/3590-18, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության 2018 թվականի մարտի 29-ի N 04/15.1/1949-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 30-ի N 06/3-8/15955-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Այգեձորի 53, ՀՎՀՀ՝ 01538594) 2018-2019 թվականներին իրականացվող՝ 343,000,000 դրամ ընդհանուր արժեքով «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի կառավարման ազգային ծրագրի բարելավմանն ուղղված համապարփակ աջակցություն» ծրագիրը (կցվում է):

2. Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-



ման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Արցախի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Երևանի քաղաքապետին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Բժիշկներ առանց սահմանների» միության
հայաստանյան մասնաճյուղի ղեկավար

Իզաբել Բրետոն

Երևան, 9-ը ապրիլի 2018թ.

# «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի կառավարման ազգային ծրագրի բարելավմանն ուղղված համապարփակ աջակցություն»

## ԾՐԱԳԻՐ

| | |
|---|---|
| 1. Ծրագրի նպատակը | ▪ Հայաստանում բազմադեղորայքակայուն (ԲԴԿ) ՏԲ բուժմանն ուղղված գործունեության շարունակական փոխանցում ապահովել «Բժիշկներ առանց սահմանների» միությունից այլ գործընկերների՝ հիվանդի խնամքի նվազագույն ընդհատումներով, բազմադեղակայուն (ԲԴԿ) ՏԲ-ի բուժման որակի ապահովմամբ, ՏԲ նոր դեղորայքի կիրառմամբ, նոր ՏԲ դեղորայքով բուժվող ԲԴԿ ՏԲ հիվանդների սոցիալական աջակցության և կանխարգելման ծառայությունների ապահովմամբ<br>▪ Բարելավել տուբերկուլոզի այն դեպքերի հայտնաբերման գործընթացը, որոնք կարող են բուժվել նոր ՏԲ դեղորայքով:<br>▪ Առաջարկել բազմադեղորայքակայուն տուբերկուլոզով հիվանդների որակյալ բուժում՝ օգտագործելով երաշխավորված որակով և վերանպատակավորված դեղորայք:<br>▪ Բարելավել նոր ՏԲ դեղորայքով բուժվող բազմադեղորայքակայուն տուբերկուլոզով հիվանդների և նրանց ընտանիքների կրթումը՝ բուժման հետևողականությունն ապահովելու և դրա ձախողումը կանխելու նպատակով<br>▪ Բարելավել վարակի վերահսկման քաղաքականությունը, և փորձը կիրառել տարածքներում:<br>▪ Աջակցել հեպատիտ C-ի դեմ բուժում ստացող դեղորայքակայուն տուբերկուլոզով հիվանդներին՝ ներգրավվածություն և արդյունավետություն ապահովելու նպատակով:<br>▪ Իրականացնել նոր դեղորայքով ԲԴԿ ՏԲ բուժման վերաբերյալ առողջապահական կառույցների բուժանձնակազմի վերապատրաստում |
| 2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկերի տուրքերի և մաքսային վճարումների գծով սահմանված արտոնություններից: |
| 3. Բարեգործը | Ֆրանսիայի «Բժիշկներ առանց սահմանների» միություն<br>Ֆրանսիա, Փարիզ 75011, Սեն-Սաբեն փ. 8 |
| 4. Ծրագրի կատարող | Ֆրանսիայի «Բժիշկներ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ<br>ՀՀ, ք. Երևան, Այգեձորի 53բ, ՀՎՀՀ 01538594/ հեռ.՝ (010) 27 6445/ |
| 5. Ծրագրի իրկանացման վայրը և բնագավառը | Առողջապահական բնագավառ<br>Երևանի քաղաքային և Ստեփանակերտի հակատուբերկուլոզային դիսպանսերներ, Երևան քաղաքի տուբերկուլոզի կաբինետներ, Աբովյան քաղաքի հանրապետական հակատուբերկուլոզային դիսպանսեր, Քրեակատարողական հիմնարկի դատապարտյալների հիվանդանոց՝ համագործակցելով Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոնի հետ /Առողջապահության նախարարություն/: |
| 6 Ծրագրի բյուջեն | **Ընդամենը նախատեսվում է.<br>343,000,000 ՀՀ Դրամ** |
| 7 Շահառուները (բարեգործություն ստացողները) | Դեղորայքակայուն տուբերկուլոզով հիվանդները և ընտանիքները |
| 8. Ծրագրի իրականացման տևողությունը | **1-ը ապրիլի 2018թ - 31-ը մարտի 2019թ** |
| 9. Ծրագրի գործողությունների նկարագրությունը, ժամկետները և անհրաժեշտ ֆինանսական միջոցները | Դեղորայքի, բուժ. և լաբորատոր պարագաների և սարքավորումների ձեռքբերում և ներմուծում, դրանց առնչվող ծառայությունների և փոխադրման ծախսեր<br><br>**Ընդամենը՝ 185,000,000 ՀՀ Դրամ** |
| | ՀՀ առողջապահության նախարարության և ԲԱՍ-ի բուժ. աշխատակազմերի ուսուցման (մենթորինգ), տեղեկատվական ծախսեր<br><br>**Ընդամենը՝ 37 000 000 ՀՀ դրամ**<br>2018թ. 2-րդ եռամսյակ՝ 10,000,000 ՀՀ դրամ<br>2018թ. 3-րդ եռամսյակ՝ 10,000,000 ՀՀ դրամ<br>2018թ. 4-րդ եռամսյակ՝ 12,000,000 ՀՀ դրամ<br>2019թ. 1-ին եռամսյակ ՝ 5,000,000 ՀՀ դրամ |

| | |
|---|---|
| | Սոցիալ-հոգեբանական անհատական աջակցություն (հիգիենայի պարագաներ, կենսապայմանների բարելավում, հիվանդներին տրամադրվող տրանսպորտային ծախսեր) կարիքավոր հիվանդներին, դեղորայքի ընդունման վերահսկողություն՝ բուժման հետևողականությունն ապահովելու նպատակով, հիվանդների խնամք տնային այցելությունների միջոցով և հեռակառավարմամբ:<br><br>**Ընդամենը՝ 22, 000,000 ՀՀ Դրամ**<br>2018թ. 2-րդ եռամսյակ՝ 6,000,000 ՀՀ դրամ<br>2018թ. 3-րդ եռամսյակ՝ 6,000,000 ՀՀ դրամ<br>2018թ. 4-րդ եռամսյակ՝ 6,000,000 ՀՀ դրամ<br>2019թ. 1-ին եռամսյակ ՝ 4,000,000 ՀՀ դրամ |
| | Հավելյալ սնունդ խոցելի հիվանդների համար՝ ապահովելու բուժման նկատմամբ հետևողականությունը<br><br>**Ընդամենը՝ 6,700,000 ՀՀ Դրամ**<br>2018թ. 2-րդ եռամսյակ՝ 2,000,000 ՀՀ դրամ<br>2018թ. 3-րդ եռամսյակ՝ 2,000,000 ՀՀ դրամ<br>2018թ. 4-րդ եռամսյակ՝ 2,000,000 ՀՀ դրամ<br>2019թ. 1-ին եռամսյակ ՝ 700,000 ՀՀ դրամ |
| | Կազմակերպչական և գրասենյակային ծախսեր<br><br>**Ընդամենը՝ 50,000,000 ՀՀ Դրամ**<br>2018թ. 2-րդ եռամսյակ՝ 12,500,000 ՀՀ դրամ<br>2018թ. 3-րդ եռամսյակ՝ 12,500,000 ՀՀ դրամ<br>2018թ. 4-րդ եռամսյակ՝ 12,500,000 ՀՀ դրամ<br>2019թ. 1-ին եռամսյակ ՝ 12,500,000ՀՀ դրամ |
| | Ավտոմեքենայի պահեստամասերի և վառելիքի ձեռքբերման, ընթացիկ խնամքի ծախսեր<br><br>**Ընդամենը՝ 18,000,000 ՀՀ Դրամ**<br>2018թ. 2-րդ եռամսյակ՝ 4,000,000 ՀՀ դրամ<br>2018թ. 3-րդ եռամսյակ՝ 4,000,000 ՀՀ դրամ<br>2018թ. 4-րդ եռամսյակ՝ 6,000,000 ՀՀ դրամ<br>2019թ. 1-ին եռամսյակ ՝ 4,000,000 ՀՀ դրամ |

| | |
|---|---|
| | Շինարարական-վերանորոգման աշխատանքներ Աբովյանի ՀՀՏԴ –ում և ՀՀ ՏԲ կառույցներում<br><br>**Ընդամենը՝ 23,300,000 ՀՀ Դրամ**<br>2018թ. 2-րդ եռամսյակ՝ 6,500,000 ՀՀ դրամ<br>2018թ. 3-րդ եռամսյակ՝ 6,500,000 ՀՀ դրամ<br>2018թ. 4-րդ եռամսյակ՝ 6,500,000 ՀՀ դրամ<br>2019թ. 1-ին եռամսյակ ՝ 3,800,000ՀՀ դրամ |
| | Սանիտարահիգիենիկ և վարակի վերահսկման պարագաների ձեռքբերում և ներմուծում, դրանց առնչվող ծառայությունների և փոխադրման ծախսեր<br><br>**Ընդամենը՝ 1,000,000 ՀՀ Դրամ**<br>2018թ. 2-րդ եռամսյակ՝ 250,000 ՀՀ դրամ<br>2018թ. 3-րդ եռամսյակ՝ 250,000 ՀՀ դրամ<br>2018թ. 4-րդ եռամսյակ՝ 250,000 ՀՀ դրամ<br>2019թ. 1-ին եռամսյակ ՝ 250,000 ՀՀ դրամ |
| 10. Սույն ծրագրի շրջանակներում գնման գործընթացը և ապրանքների ներմուծումը, ծառայությունների համառոտ նկարագրությունը, քանակը, ծավալը և գինը (եթե կարծում եք, որ պետք է ազատվել հարկերից կոնկրետ գումարի մասով) | Դեղորայքի, բուժ. և լաբորատոր պարագաների և սարքավորումների ձեռքբերում և ներմուծում, դրանց առնչվող ծառայությունների և փոխադրման ծախսեր<br><br>**Ընդամենը՝ 185,000,000 ՀՀ դրամ,**<br><br>**Որից՝**<br>Ներմուծվող դեղորայք, բուժ. և լաբորատոր պարագաներ և սարքավորումներ, դրանց առնչվող ծառայությունների և փոխադրման ծախսեր՝<br>**166,000,000 ՀՀ դրամ,**<br><br>**Տեղական շուկայից ձեռք բերվող** դեղորայք, բուժ. և լաբորատոր պարագաներ և սարքավորումներ՝<br>**18,000,000 ՀՀ դրամ** |
| | ՀՀ առողջապահության նախարարության և ԲԱՄ-ի բուժ. աշխատակազմերի ուսուցման, վերապատրաստման, այդ թվում՝ ՀՀ-ից դուրս, տեղեկատվական ծախսեր.<br><br>Ընդամենը՝ 37 000 000 ՀՀ դրամ, |

| | |
|---|---|
| | այդ թվում՝<br><br>Հյուրանոցային ծառայություններ՝ 7,000,000 ՀՀ դրամ<br>Սննդի ձեռքբերում՝ 5,500,000 ՀՀ դրամ<br>Սրահի և տեխնիկայի վարձակալություն՝ 10,000,000 ՀՀ դրամ<br>Ուսուցողական նյութերի, ձեռնարկների տպագրություն ՝ 6,500,000 ՀՀ դրամ<br>Գրենական պիտույքների ձեռքբերում՝ 2,500,000 ՀՀ դրամ<br>Արտագնա վերապատրաստումների ավիատրանսպորտային ծախսեր՝ 5,500,000 ՀՀ դրամ<br><br>Սոցիալ-հոգեբանական անհատական աջակցություն (հիգիենայի պարագաներ, կենսապայմանների բարելավում, հիվանդներին տրամադրվող տրանսպորտային ծախսեր) կարիքավոր հիվանդներին, դեղորայքի ընդունման վերահսկողություն՝ բուժման հետևողականությունն ապահովելու նպատակով, հիվանդների խնամք տնային այցելությունների միջոցով և հեռակառավարմամբ։<br><br>**Ընդամենը՝ 22, 000,000 ՀՀ Դրամ**<br><br>Համընդհանուր սնունդ խոցելի հիվանդների համար՝ ապահովելու բուժման նկատմամբ հետևողականությունը<br><br>**Ընդամենը՝ 6,700,000 ՀՀ Դրամ**<br><br>Կազմակերպչական և գրասենյակային ծախսեր<br><br>**Ընդամենը՝ 50,000,000 ՀՀ դրամ**<br><br>Ավտոմեքենայի պահեստամասերի և վառելիքի ձեռքբերման, ընթացիկ խնամքի ծախսեր<br><br>**Ընդամենը՝ 18,000,000 ՀՀ Դրամ**<br><br>Շինարարական-վերանորոգման աշխատանքներ Արովյանի հանրապետական ՏԴ –ում և ՀՀ ՏԲ կառույցներում<br><br>**Ընդամենը՝ 23,300,000 ՀՀ դրամ** |

| | |
|---|---|
| | Սանիտարահիգիենիկ և վարակի վերահսկման պարագաների ձեռքբերում և ներմուծում, դրանց առնչվող ծառայությունների և փոխադրման ծախսեր<br><br>**Ընդամենը՝ 1,000,000 ՀՀ Դրամ** |
| 11. Ծրագրի իրականացմանն առնչվող կազմակերպչական ծախսեր | **Ընդամենը՝ 50,000,000 ՀՀ Դրամ, որից՝**<br>Գրասենյակի վարձակալության ՝ 26,500,000 ՀՀ դրամ<br>Ընթացիկ շահագործման, վերանորոգման ծախսեր՝ 1,500 000 ՀՀ դրամ<br>Գրենական պիտույքներ և գրասենյակային տեխնիկա, կահույք ՝ 6,000,000 ՀՀ դրամ<br>Կոմունալ (գազ, էլեկտրաէներգիա, ջուր) ՝ 8,500,000 ՀՀ դրամ<br>Հեռահաղորդակցության ծախսեր (հեռախոս և համացանց)՝ 6,500,000 ՀՀ դրամ<br>Ներկայացուցչական ծախսեր՝ 1,000,000 ՀՀ դրամ |
| 12. Համագործակցություն պետական և տեղական մարմինների, այլ ՀԿ-ների հետ | ՀՀ Առողջապահության նախարարություն, ՀՀ Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, Տուբերկուլոզի ազգային գրասենյակ, Գլոբալ հիմնադրամ, Առողջապահության համաշխարհային կազմակերպություն |
| 13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հաշվետվություններ ՀՀ Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության, ինչպես նաև կազմակերպության գլխամասային գրասենյակի մակարդակով |

Կատարող՝ Ն.Միրզոյան Հեռ. 055 55 90 33

8

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**6 ապրիլի 2018 թվականի N Մ - 271 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՍԱՏԱՐ» ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 30-ի N 01.1/14-2/5848-18, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2018 թվականի ապրիլի 3-ի N ԱՊ/ԱնՄ-2-1/3422-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 29-ի N 06/3-8/15732-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից «ART, MUSIC, SPORT ASSOCIATION» ոչ առևտրային կազմակերպության կողմից «Սատար» հաշմանդամների հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի (մեծահասակների օգտագործված հագուստ, մանկական նոր հագուստ և խաղալիքներ, մեծահասակների տակդիրներ, քայլակներ և սայլակներ՝ 1,014 կգ ընդհանուր քաշով, 2,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 200 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Արցախյան ազատամարտին մասնակցած հաշմանդամություն ստացված անձանց, զոհվածների ընտանիքներին, «Սատար» հաշմանդամների հասարակական կազմակերպության անդամների և սահմանամերձ տարածքներում ապրող սոցիալապես անապահով անձանց համար:

2. «Սատար» հաշմանդամների հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                                  Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**6 ապրիլի 2018 թվականի N Մ - 272 - Ա**
**քաղ. Երևան**

### «ԿԻՍԱԲԱՑ ԼՈՒՍԱՄՈՒՏՆԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 30-ի N 01.1/14-2/5843-18, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2018 թվականի ապրիլի 3-ի N ԱՊ/ԱնՄ-2-1/342318 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 3-ի N 06/3-8/16162-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից անհատ բարերար Աննա Տաշյանի կողմից «Կիսաբաց լուսամուտներ» բարեգործական հիմնադրամի հասցեով ուղարկված նոր մանկական հագուստի, կոշիկների և խաղալիքների (5 տեղ, 59.98 կգ ընդհանուր քաշով, 105 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Արևմտյան» ՄՎ) ներմուծման և բաշխման ծրագիրը: Բեռը բաշխվելու է «Կիսաբաց լուսամուտներ» հաղորդաշարի մասնակից սոցիալապես անապահով ընտանիքներին:

2. «Կիսաբաց լուսամուտներ» բարեգործական հիմնադրամին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**6 ապրիլի 2018 թվականի N Մ- 273 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 21-Ի N Մ-334-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 28-ի N 01.1/14-2/5565-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 28-ի N 06/3-8/15236-18 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 21-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Արտակարգ իրավիճակներին բարելավված նախապատրաստում և արձագանքում Հարավային Կովկասում» ծրագրի մասին» N Մ-334-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Տեքստուոըլդ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01000327) 2018 թվականի մարտի 13-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 53 կոմպլեկտ հանդերձանքի տրամադրում՝ 4,754,100 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02614085) 2018 թվականի մարտի 21-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բենզինի ծեռք բերում՝ 418,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**6 ապրիլի 2018 թվականի N Մ- 274 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-Ի N Մ-534-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Ա.Ի.Ալիխանյանի անվան Ազգային գիտական լաբորատորիա (ԵրՖի)» հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 27-ի N 01.1/14-2/5522-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 28-ի N 06/3-8/15237-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Ա.Ի.Ալիխանյանի անվան Ազգային գիտական լաբորատորիա (ԵրՖի)» հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01202364) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 23-ի «Ա.Ի.Ալիխանյանի անվան Ազգային գիտական լաբորատորիա (ԵրՖի)» հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն տիեզերական ճառագայթների բաժանմունքի գործունեությանը» ծրագրի մասին» N Մ-534-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Տիգրան Մեծ» հրատարակչություն ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02505322) 2018 թվականի մարտի 12-ին կնքված՝ N 01-03 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հրատարակչական նյութերի տպագրում՝ 10,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**6 ապրիլի 2018 թվականի N Մ - 275 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՍՊԻՏԱԿ ՖԵՐՄԵՐ» ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆԸ ԱՋԱԿՑՈՂ ԱՍՈՑԻԱՑԻԱ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿԻ ԱՆ.ՇԻՐԱԿԱՑՈՒ ԱՆՎԱՆ N 8 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ՈՒՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԲԱՐԵՆՊԱՍՏ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի ապրիլի 3-ի N 01.1/14-2/6025-18, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2018 թվականի մարտի 29-ի N 02/14/52362-18, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 4-ի N 06/3-8/16659-18 և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի 2018 թվականի ապրիլի 3-ի N 101/104.32/2009-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Սպիտակ ֆերմեր» գյուղատնտեսությանը աջակցող ասոցիացիա հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ Լոռու մարզի, քաղ.Սպիտակ, Ալեք Մանուկյան 5/1, ՀՎՀՀ՝ 06804407) իրականացվող՝ 39,836,050 դրամ արժողությամբ «ՀՀ Լոռու մարզի Սպիտակի Ան.Շիրակացու անվան N 8 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում կրթության համար բարենպաստ պայմանների ստեղծում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Սպիտակ ֆերմեր» գյուղատնտեսությանը աջակցող ասոցիացիա հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Դանիելյան» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06801811) 2018 թվականի մարտի 12-ին կնքված՝ N Դ-03/18 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջեռուցման համակարգի սարքավորումների և գույքի ձեռքբերում՝ 20,176,786 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.



2) «Շտիգեն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01574905) 2018 թվականի մարտի 12-ին կնքված՝ N Դ-04-18 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է արևային կայանի ձեռքբերում՝ 18,999,264 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02586575) 2018 թվականի մարտի 12-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 660,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Սպիտակ ֆերմեր» գյուղատնտեսությանը աջակցող ասոցիացիա հասարակական կազմակերպությանը՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Սպիտակ-Ֆերմեր» հասարակական կազմակերպության նախագահի կողմից
«27» մարտի 2018թ.

**«ՀՀ Լոռու մարզի Սպիտակի Ան. Շիրակացու անվան N8 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում կրթության համար բարենպաստ պայմանների ստեղծում» ծրագիր**

| | | |
|---|---|---|
| 1. | **Ծրագրի նպատակը** | Ծրագրի շնորհիվ կջեռուցվեն դպրոցի բոլոր 10 մասնաշենքերը, այդ թվում նաև սպորտ դահլիճն ու լողավազանը, լաբորատորիաներն ու միջանցքները: Իսկ տեղադրվող արևային կայանը հնարավորություն կտա կրկնակի կրճատել ջեռուցման ծախսերը: Ներկայումս տարեկան ջեռուցման համար ծախսվող գումարով հնարավոր է լինում ջեռուցել ընդամենը 2 մասնաշենք, իսկ ծրագրի ավարտից հետո նույն գումարով կջեռուցվեն դպրոցի բոլոր 10 մասնաշենքերը՝ դասարաններում 12 աստիճանի փոխարեն ապահովելով 20 աստիճան ջերմություն:<br>Կտեղադրվեն չորս թեքահարթակներ, որոնք կօգնեն հասանելի դարձնել դպրոցի բոլոր մասնաշենքերը հենաշարժողական խնդիր ունեցող աշակերտներին:<br>Կվերանորոգվի դպրոցի լաբորատորիաների հատակները, որի շնորհիվ հնարավորություն կստեղծվի լիարժեք դասընթացների կազմակերպումը: |
| 2. | **Ծրագրի բարեգործական որակման նպատակը** | Օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | **Բարեգործը** | Ճապոնիայի կառավարություն՝ ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանատան միջոցով |
| 4. | **Ծրագիրը կատարողը** | «Սպիտակ-Ֆերմեր» գյուղատնտեսությանը աջակցող ասոցիացիա հասարակական կազմակերպություն, ՀՎՀՀ 06804407, Լոռու մարզ, ք. Սպիտակ, Ալեք Մանուկյան 5/1 |
| 5. | **Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը** | ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ, կրթական |
| 6. | **Ծրագրի բյուջեն** | 39,836,050 ՀՀ դրամ |
| 7. | **Բարեգործություն ստացողը** | ՀՀ Լոռու մարզի Սպիտակի Ան. Շիրակացու անվան N8 միջնակարգ դպրոց ՊՈԱԿ, ՀՎՀՀ 06802668, ք. Սպիտակ, Ուզբեկական 64 |
| 8. | **Ծրագրի իրականացման տևողությունը** | 11.03.2018 – 15.10.2018 |
| 9. | **Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը** | Ծրագրի շրջանակներում փոխվելու և արդիականացվելու է դպրոցի ամբողջ ջեռուցման համակարգը:<br>1. Կառուցվելու է 40կվտ/ժ հզորության արևային ֆոտովոլտային կայան, արժեքը 18,999,264 ՀՀ դրամ, աշխատանքների կատարման ժամկետ՝ 11.03.2018 - 15.03.2018<br>2. Տեղադրվելու է 55կվտ/ժ հզորության կոնդենսացիոն 8 ջեռուցման կաթսա, կառուցվելու է ջեռուցման ներքին ցանց, արժեքը 17,343,298 ՀՀ դրամ, աշխատանքների կատարման ժամկետ՝ 11.03.2018 - 15.03.2018<br>3. Չորս թեքահարթակների տեղադրում հաշմանդամ երեխաների համար, արժեքը 1,839,936 ՀՀ դրամ, աշխատանքների կատարման ժամկետ՝ 11.03.2018 - 15.03.2018<br>4. Դասասենյակների հատակների մասնակի վերանորոգում, արժեքը 993,552 ՀՀ դրամ, աշխատանքների կատարման ժամկետ՝ 11.03.2018 - 15.03.2018<br>5. Աուդիտ՝ 660,000 ՀՀ դրամ, աշխատանքների կատարման ժամկետ՝ 11.03.2018 - 15.03.2018 |
| 10. | **Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը** | 1. 40կվտ/ժ հզորության արևային ֆոտովոլտային կայան, արժեքը 18,999,264 ՀՀ դրամ, ձեռքբերում<br>2. 55կվտ/ժ հզորության կոնդենսացիոն 8 ջեռուցման կաթսա, ջեռուցման ներքին ցանց, արժեքը 17,343,298 ՀՀ դրամ, ձեռքբերում<br>3. 4 թեքահարթակներ հաշմանդամ երեխաների համար, արժեքը 1,839,936 ՀՀ դրամ, ձեռքբերում<br>4. 420 քառ. մ մակերեսով ռետինե հատակ, արժեքը 993,552 ՀՀ դրամ, ձեռքբերում<br>5. Աուդիտորական ծառայություն, արժեքը՝ 660,000 ՀՀ դրամ |
| 11. | **Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը** | Աուդիտորական ծառայություն, արժեքը՝ 660,000 ՀՀ դրամ |
| 12. | **Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ** | ՀՀ Լոռու մարզի Սպիտակի Ան. Շիրակացու անվան N8 միջնակարգ դպրոց ՊՈԱԿ, ՀՎՀՀ 06802668, ք. Սպիտակ, Ուզբեկական 64<br>ՀՀ Լոռու մարզպետարան, ք. Վանաձոր, Հայքի հրապարակ |
| 13. | **Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը** | Մշտադիտարկում և վերահսկում Ճապոնիայի դեսպանատան, «Սպիտակ-Ֆերմեր» գյուղատնտեսությանը աջակցող ասոցիացիա հասարակական կազմակերպության և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով, ֆինանսական և ծրագրի իրականացման մոնիտորինգ՝ անկախ աուդիտորական կազմակերպության և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**6 ապրիլի 2018 թվականի N Մ - 276 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N Մ-1264-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի ապրիլի 3-ի N 01.1/14-2/6026-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 5-ի N 06/3-8/16913-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Ֆրանսիայի հայկական հիմնադրամի կողմից «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի հասցեով ստացված կենդանիների պատվաստանյութը (32 կգ ընդհանուր քաշով, 4,281.79 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Արևմտյան» ՄՎ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 27-ի «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղատնտեսության զարգացում» ծրագրի մասին» N Մ-1264-Ա որոշմամբ (2017 թվականի հունվարի 27-ի Մ-036-Ա և 2018 թվականի փետրվարի 21-ի Մ-123-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                                  Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**6 ապրիլի 2018 թվականի N Մ-277-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԱՐԶԱԳՈՒՅՔԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի ապրիլի 5-ի N 01.1/14-2/6161-18, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 4-ի N 06/3-8/16799-18 և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2018 թվականի ապրիլի 7-ի N 02/14/52951-18 եզրակացությունները,* **որոշում է.**

1. Բարեգործական որակել «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915) իրականացվող՝ 18,000,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Մարզագույքի ներմուծում» ծրագիրը (կցվում է):

2. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում [illegible] կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված [illegible] ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա [illegible] ծրագրի կատարման մասին:

3. Սույն [illegible] Հանրապետության կառավարություն, Հայաստանի [illegible] նախարարություն և Հայաստանի Հանրապետության կ[illegible] եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ [illegible] Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության նախագահի Ռ. Հայրապետյանի կողմից

«29» մարտի 2018թ.

## Ծ Ր Ա Գ Ի Ր
**«Մարզագույքի ներմուծում»**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Արցախի Հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման, ինչպես նաև տարբեր մարզաձևերի մասսայականացման նպատակով մարզագույքի ներմուծում «ԼՂՀ Ֆուտբոլի Ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը անհատույց հանձնելու համար: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միություն - (UEFA - Շվեյցարիա, Ժնև): |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ 02566915): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվելու է Արցախի Հանրապետությունում սպորտի բնագավառում: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 18,000,000 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Արցախի Հանրապետությունը՝ ի դեմս «ԼՂՀ Ֆուտբոլի Ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (քաղ. Ստեփանակերտ, Ստեփան Շահումյանի անվան հանրապետական մարզադաշտ, ՀՎՀՀ 90019614): |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2018 թվականի մարտի 29-ից մինչև 2018 թվականի օգոստոսի 31-ը: |

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Մարզագույքի ներմուծում՝ շուրջ 18,000,000 դրամ նախատեսվում է իրականացնել 2018 թվականի մարտի 29-ից մինչև 2018 թվականի օգոստոսի 31-ը: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ներմուծել 18,000,000 դրամի մարզագույք: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ համագործակցություն չի նախատեսվում: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը կիրականացվի ՈՒԵՖԱ-ի (ֆինանսական աուդիտ) և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից: |

Կազմեց՝ Ծրագրի ֆինանսական պատասխանատու Հայկ Մակարյան ______________

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**06 ապրիլի 2018 թվականի N Մ-278-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N Մ-1145-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**
(Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի ապրիլի 5-ի N 01.1/14-2/6220-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 5-ի N 06/3-8/17115-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02662248) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների զարգացում» ծրագրի մասին» N Մ-1145-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Արմենիա Հյուրանոցային Համալիր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02504956) 2018 թվականի մարտի 28-ին կնքված՝ N 1271971 պայմանագրով նշված գործարքը, որով նախատեսվում է բանկետի կազմակերպման և սրահի տրամադրման ծառայությունների մատուցում՝ 79,600 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Փրոջեքթ Մենեջմենթ Յունիթ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00258778) 2018 թվականի մարտի 30-ին կնքված՝ N 2294-270318 պայմանագրով նշված գործարքը, որով նախատեսվում է Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների ոլորտի վիճակի հետազոտություն՝ 15,550,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**06 ապրիլի 2018 թվականի N Մ-279-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N Մ-1145-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի ապրիլի 5-ի N 01.1/14-2/6162-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 4-ի N 06/3-8/16798-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02662248) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների զարգացում» ծրագրի մասին» N Մ-1145-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՆիկԴավ Գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01829142) 2018 թվականի մարտի 29-ին կնքված՝ N 2288-270318 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 180,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**6 ապրիլի 2018 թվականի N Մ - 280 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի N Մ-1469-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 19-ի N01.1/14-2/4957-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 21-ի N 06/3-8/13831-18 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 13-ի «Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից 2016-2021 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-1469-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կարեն-93» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01500165) 2018 թվականի մարտի 14-ին կնքված՝ N 014/18 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Ստեփանավան քաղաքի, Դուրյան 30 և Բաղրամյան 60 հասցեում գտնվող շենքերի քանդման աշխատանքների կատարում՝ 9,626,110 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**6 ապրիլի 2018 թվականի N Մ - 281 - Ա**

**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-968-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՄԵԾՆ ՆԵՐՍԵՍ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 29-ի N 01.1/14-2/5692-18, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2018 թվականի ապրիլի 3-ի N ԱՊ/ԱնՄ-2-1/3419-18 ու Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 19-ի N 06/3-8/19994-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի «Մեծն Ներսես» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2015-2018 թվականներին իրականացվող բարեգործական ծրագրի մասին» N Մ-968-Ա (2017 թվականի մարտի 10-ի N Մ-184-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որշման 3-րդ կետում «ինչպես նաև բեռների ներմուծում Հայաստան Արցախ հիմնադրամի միջոցով» բառերը փոխարինել «ինչպես նաև ԱմերիՔեյրս և Հայաստան-Արցախ հիմնադրամները».

2) ծրագրի 6-րդ և 9-րդ կետերում «1,586,400 ԱՄՆ-ի դոլար» բառերը փոխարինել «2,000,000 ԱՄՆ-ի դոլար» բառերով.

3) ծրագրի 9-րդ և 10-րդ կետերում «702,000 ԱՄՆ-ի դոլար» բառերը փոխարինել «1,115,600 ԱՄՆ-ի դոլար» բառերով.

4) ծրագրի 7-րդ կետում շահառուները լրացնել «Գուրգեն Մելիքյանի Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ», Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ և այլ շահ չհետապնդող կազմակերպությոըններ» բառերով:

2. Սահմանել, որ Հաաստան-Արցախ հիմնադրամի միջոցով «Americares» հիմնադրամի կողմից «Մեծն Ներսես» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված ռետինե հողաթափերը (60,480 զույգ, 23,723.7 կգ ընդհանուր քաշով, 343,526.4 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 7,537 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» մաքսատուն-վարչություն, բեռի բաշխման ցանկը կցվում է) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## Ցանկ

### 60,480 զույգ ռետինե հողաթափերի բաշխման

| N | Կազմակերպության անվանում | Քանակ Զույգ | Գին ԱՄՆ դոլար | Գումար |
|---|---|---|---|---|
| 1 | Ամերիկայի Հայ Օգնության Ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ | 26,190 | 5.8046 | 152,022.90 |
| 2 | «Զորզեն Սեիզյան բազմազավակ ընտանիքների հիմնադրամ» | 8,280 | 5.8046 | 48,062.50 |
| 3 | «Մեծն Ներսես» բարեգործական հասարակական կազմակերպություն | 26,010 | 5.8046 | 150,978.00 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 60,480 | | 351,063.40 |

«Մեծն Ներսես» ԲՀԿ գործադիր տնօրեն Տիգրան Գալստյան

26.03.2018թ.

## Ցանկ

### 26,010 զույգ ռետինե հողաթափերի նախնական բաշխման

| N | Կազմակերպության անվանում | Քանակ (զույգ) |
|---|---|---|
| 1 | «Մեծն Ներսես» ԲՀԿ շահառուներ (Երկողմանի և միակողմանի ծնողազուրկ երեխաներ և հաշմանդամներ) | 4170 |
| 2 | Նուբարաշենի թիվ 11 (հատուկ) օժանդակ դպրոց | 100 |
| 3 | "Զատիկ" աջակցության կենտրոն | 70 |
| 4 | Մարի Իզմիրյանի անվան մանկատուն ՊՈԱԿ | 70 |
| 5 | "Լույսի Աստղ" հաշմանդամ երեխաների ծնողների ՀԿ | 150 |
| 6 | Հայկական Կարմիր խաչ ընկերություն | 180 |
| 7 | "Հանս Քրիստյան Կոֆոյեդ" ԲՀ | 120 |
| 8 | "Կանթեղ" ԲՀԿ | 150 |
| 9 | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 600 |
| 10 | Հալեպ Հայրենակցական ԲՀԿ | 1110 |
| 11 | Երևանի թիվ 62 ավագ դպրոց | 210 |
| 12 | Հայաստանի «ԴՕՍԱՖ» ՀԿ- Միացյալ մարզատեխ-դպրոց | 120 |
| 13 | Երևանի քաղաքապետերան Կենտրոն վարչական շրջանի սոց. բաժին | 510 |
| 14 | Երևանի քաղաքապետերան Նորք Մարաշ վարչական շրջանի սոց. բաժին | 570 |

| | | |
|---|---|---|
| 15 | Երևանի քաղաքապետերան<br>Էրեբունի վարչական շրջանի սոց բաժին | 600 |
| 16 | Ռուսաց լեզվի և գրականության մանկ. վետերանների միություն | 300 |
| 17 | Տարածքային զարգացման և հետազոտությունների կենտրոն ՀԿ | 630 |
| 18 | «Սևան երիտասարդական ակումբ» ՀԿ | 360 |
| 19 | Մշակույթի զարգացման բարեգործական հիմնադրամ | 180 |
| 20 | ՀՀ բռնցքամարտի ֆեդերացիա ՀԿ | 210 |
| 21 | «Արծիվ մահապարտների միություն» ՀԿ | 210 |
| 22 | «Տաթև» մշակութային կենտրոն | 60 |
| 23 | Վարդանանք կրթահամալիր | 210 |
| 24 | «Արշալույս» կանաց ԲՀԿ | 60 |
| 25 | Երևանի Աշոտ Մանուկյանի անվան թիվ 93 հիմնական դպրոց | 180 |
| 26 | Երևանի Էդուարդ Բոյաջյանի անվան թիվ 121 հիմնական դպրոց | 180 |
| 27 | ՀՀ ԵԿՄ Թալին տարածքային բաժանմունք | 600 |
| 28 | ՀՀ ԵԿՄ Վայոց Ձորի տարածքային բաժանմունք | 510 |
| 29 | Վաղարշապատ մարզական ակումբ | 300 |
| 30 | «Հրաշամանուկ - 2016» խնամքի կենտրոն ՍՊԸ | 120 |
| 31 | Ռեգիոնալ Զարգացման Համագործակցություն հասարակական կազմակերպություն | 120 |
| 32 | Արմավիրի մարզ Տալվորիկ գյուղ | 180 |
| 33 | Արմավիրի մարզ Երվանդաշատ գյուղ | 360 |
| 34 | Արմավիրի մարզ Շենիկ գյուղ | 180 |
| 35 | Արմավիրի մարզ Այգեկ գյուղ | 120 |
| 36 | Արմավիրի մարզ Մրգաշատ գյուղի N 2 միջն. դպրոց | 240 |
| 37 | Արագածոտնի թեմի Առաջնորդարան | 180 |
| 38 | Արագածոտնի մարզ Թաթուլ գյուղ | 180 |
| 39 | Արագածոտնի մարզ Ղազարավան գյուղ | 450 |
| 40 | Արագածոտնի մարզ Թթու ջուր գյուղ | 120 |
| 41 | Արագածոտնի մարզ Աշնակ գյուղ | 210 |
| 42 | Արագածոտնի մարզ Կարբի գյուղ | 550 |
| 43 | Արագածոտնի մարզ Կարմրաշեն գյուղ | 210 |
| 44 | Արագածոտնի մարզ Ոսկեթաս գյուղ | 180 |
| 45 | Արագածոտնի մարզ Օրգով գյուղ | 120 |
| 46 | Արագածոտնի մարզ Բյուրական գյուղ | 120 |
| 47 | Արագածոտնի մարզ Դիան գյուղ | 120 |
| 48 | Արագածոտնի մարզ Վերին Սասնաշեն գյուղ | 180 |
| 49 | Արագածոտնի մարզ Մուղնիի Մ. Աշճյանի անվան միջն.դպրոց | 120 |

| | | |
|---|---|---|
| 50 | Արագածոտնի մարզ Կաքավաձոր գյուղի միջն. դպրոց | 150 |
| 51 | Կոտայքի մարզ Աղավնաձոր գյուղի Հրաչ դանիելյանի անվան հիմնական դպրոց | 270 |
| 52 | Կոտայքի մարզ Ձառի ժ. Սարգսյանի միջն. դպրոց | 300 |
| 53 | ՀՀ երեխաների աջակցության հիմնադրամ | 300 |
| 54 | Գեղարքունիկի մարզ Վարդենիսի զինվորական հոսպիտալ Զ - Մ 62426 | 90 |
| 55 | ՊՆ բանակային 2-րդ կորպուս Զ - Մ 28233 | 600 |
| 56 | Գեղարքունիկի մարզ Գավառի Բունաթյանի անվան N 8 միջն դպրոց | 180 |
| 57 | Գեղարքունիկի մարզ Գավառի մանկատուն | 80 |
| 58 | Գեղարքունիկի մարզ Ճամբարակ համայնք | 270 |
| 59 | Գեղարքունիկի մարզ Տորֆավան գյուղ | 210 |
| 60 | Գեղարքունիկի մարզ Ծովակի միջն. դպրոց | 450 |
| 61 | Գեղարքունիկի մարզ Ախպրաձոր գյուղ | 210 |
| 62 | Գեղարքունիկի մարզ Վանևան գյուղ | 180 |
| 63 | Շիրակի մարզ Անի համայնք Սառնաղբյուր բնակավայր | 210 |
| 64 | Շիրակի մարզ «Թռչունյանց տուն» մանկատուն | 90 |
| 65 | Շիրակի մարզ Գյումրիի N 30 հիմնական դպրոց | 180 |
| 66 | Լոռու մարզ Դսեղ գյուղի միջն. դպրոց | 240 |
| 67 | Լոռու մարզ Ահնիձոր գյուղի հիմնական դպրոց | 120 |

| | | |
|---|---|---|
| 68 | Լոռու մարզ Լոռուտ գյուղի միջն. դպրոց | 180 |
| 69 | Տավուշի մարզ Դիլիջան համայնք Հովք բնակավայր | 180 |
| 70 | Տավուշի մարզ Դիտավան գյուղ | 330 |
| 71 | Տավուշի մարզ Գանձաքար գյուղ | 210 |
| 72 | Տավուշի մարզ Այգեհովիտ գյուղ | 240 |
| 73 | Տավուշի մարզ Խաշթառակ գյուղ | 180 |
| 74 | Տավուշի մարզ Բերքաբեր գյուղ | 180 |
| 75 | Տավուշի մարզ Սևքար գյուղ | 180 |
| 76 | Տավուշի մարզ Լճկաձոր գյուղ հիմն. դպրոց | 210 |
| 77 | Վայոց Ձորի Թեմի Առաջնորդարան | 570 |
| 78 | Վայոց Ձորի մարզ Վայք համայնք | 300 |
| 79 | Վայոց Ձորի մարզ Արենի համայնք Խաչիկ բնակավայր | 210 |
| 80 | Արարատի մարզ Դիտակ գյուղ | 210 |
| 81 | Արարատի մարզ Ղուկասավան գյուղ | 180 |
| 82 | Արարատի մարզ Աբովյան գյուղ | 270 |
| 83 | Արարատի մարզ Վարդաշատ գյուղ | 150 |
| 84 | Արարատի մարզ Այգավան գյուղի միջն. դպրոց | 150 |
| 85 | Արարատի մարզ Լանջազատի միջն. դպրոց | 120 |

| | | |
|---|---|---|
| 86 | Արարատի մարզ Դաշտաքար գյուղ միջն. դպրոց | 150 |
| 87 | Արարատի մարզ Այնթափ գյուղ | 210 |
| 88 | Արարատի մարզ Նորաշեն գյուղ | 210 |
| 89 | Արարատի մարզ Մրգավետ գյուղ | 150 |
| 90 | ԼՂՀ մարտակերտի շրջանի Ակնաբերդ գյուղի Շ. Մեղրյանի անվան միջն. դպրոց | 180 |
| 91 | ԼՂՀ մարտակերտի շրջան Մատաղիսի գյուղ միջն. դպրոց | 150 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | *26,010* |

«Մեծ Ներսես» ԲՀԿ գործադիր տնօրեն՝ Տիգրան Գալստյան

26.03. 2018թ.

4/6.18

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**6 ապրիլի 2018 թվականի N Մ- 282 -Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի N Մ-1469-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N1

**(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 19-ի N 01.1/14-2/4969-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 21-ի N06/3-8/13818-18 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ ԱՄՆ-ից՝ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության կողմից, Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի հասցեով ստացված և ներմուծված դպրոցական պայուսակները (1 տեղ, 18 հատ, 9.14 կգ ընդհանուր քաշով, 360 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, ներառյալ փոխադրման և այլ ծախսերը, Արևմտյան ՄՎ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 13-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից 2016-2021 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-1469-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**6 ապրիլի 2018 թվականի N Մ- 283 -Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի N Մ-1469-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N2

**(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 20-ի N 01.1/14-2/4968-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 21-ի N06/3-8/13685-18 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ ԱՄՆ-ից՝ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության կողմից, Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի հասցեով ստացված և ներմուծված դպրոցական պայուսակները ( 5 տեղ, 165 հատ, 83.92 կգ ընդհանուր քաշով, 3,300 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, ներառյալ փոխադրման և այլ ծախսերը, «Արևմտյան» ՄՎ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 13-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից 2016-2021 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-1469-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**6 ապրիլի 2018 թվականի N Մ- 284 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 30-ի N 01.1/14-2/5853-18, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2018 թվականի ապրիլի 3-ի N ՆՁ/22.2/3743-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 4–ի N 06/3-8/16660-18 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված բեռի (ամբիոմե տեսակի դեղանյութ, 30 սրվակ, 1 տեղ, 10 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 7,930 հնդկական ռուփի, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**6 ապրիլի 2018 թվականի N Մ- 285 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի ապրիլի 3-ի N 01.1/14-2/5977-18, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2018 թվականի ապրիլի 3-ի N ՆՋ/22.2/3773-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 3–ի N 06/3-8/16404-18 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (unicef) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված բեռի (պատվաստանյութ, 9 տեղ, 330 կգ ընդհանուր քաշով, 33,264 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 2,929.90 եվրո, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**6 ապրիլի 2018 թվականի N Մ- 286 -Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի ապրիլի 3-ի N 01.1/14-2/5962-18, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2018 թվականի ապրիլի 4-ի N ՆՁ/22.2/3828-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 3-ի N 06/3-8/16406-18 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Հիվանդությունների վերահսկման և կանխարգել-ման կենտրոնի (CDC) կողմից «American Type Culture Collection» ոչ առևտրային կազմակերպության միջոցով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված բեռի (ախտորոշիչ ազդանյու-թեր՝ 1 տեղ, 4 կգ ընդհանուր քաշով, 10 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 301 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» մաքսատուն-վարչու-թյուն) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվան-դությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-րարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**6 ապրիլի 2018 թվականի N Մ- 287 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
**(«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի ապրիլի 3-ի N 01.1/14-2/6032-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 3-ի N 06/3-8/16418-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի (ՀՎՀՀ՝ 02269952) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2018 թվականի հունվարի 26-ի «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Երևանի 2800 ամյակին նվիրված ք. Երևանի Ա. Մյասնիկյանի արձանի ետնամասում գտնվող Իտալիայի, Բեյրութի, Խորենացու և Գ. Լուսավորիչի փողոցների սահմաններում պարփակված այգու բարեկարգում և հիմնանորոգում» ծրագրի մասին» N Մ-068-Ա (2018 թվականի մարտի 16-ի N Մ-162-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էներգոսիսթեմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01252685) 2018 թվականի մարտի 14-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Երևանի 2800 ամյակին նվիրված ք. Երևանի Ա. Մյասնիկյանի արձանի ետնամասում գտնվող Իտալիայի, Բեյրութի, Խորենացու և Գ. Լուսավորիչի փողոցների սահմաններում պարփակված այգու արտաքին լուսավորության նախագծման և էլեկտրամոնտաժային աշխատանքների իրականացում՝ 10,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**10 ապրիլի 2018 թվականի N Մ - 288 - Ա**
**քաղ. Երևան**

## «ԲԱՐԻ ՄԱՄԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԲԱՇԽՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2018 թվականի մարտի 23-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի «Art, Music, Sport Association» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից, «Բարի մամա» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի (մեծահասակների օգտագործված հագուստ՝ 14 տեղ, 355.3 կգ ընդհանուր քաշով, 168.9 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 301.1 դոլար, «Արարատյան» ՄՎ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը: Բեռը բաշխվելու է անապահով ընտանիքներին, ծանր սոցիալական վիճակում գտնվող կազմակերպության շահառու ընտանիքներին և սահմանամերձ շրջաններին:

2. «Բարի մամա» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**13 ապրիլի 2018 թվականի N Մ - 289 - Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի N Մ-147-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Լալշ» եզդիների Ազգային միավորում» հասարակական կազմակերպություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2018 թվականի ապրիլի 12-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Լալշ» եզդիների Ազգային միավորում» հասարակական կազմակերպության կողմից ձեռք բերված կոպիտ սղոցված չմշակված մարմարից ուղղանկյուն և քառակուսի բլոկերը (64,260 կգ ընդհանուր քաշով, 12,096 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» մքսատուն-վարչություն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի մարտի 16-ի «Լալշ» եզդիների Ազգային միավորում» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հայաստանի եզդիների «Մալակե Տաուս» տաճարի կառուցում և հարակից տարածքների կառուցապատում» ծրագրի մասին» N Մ-147-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**6 ապրիլի 2018 թվականի N Մ- 290 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի N Մ-1469-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 19-ի N 01.1/14-2/4962-18, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության 2018 թվականի ապրիլի 18-ի N ՊՆ/510-576 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 23-ի N06/3-8/14243-18 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ ԱՄՆ-ից՝ «Matter» հիմնադրամից, Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի հասցեով ստացված, Բերդ քաղաքի ռազմական հոսպիտալի համար նախատեսված բժշկական սարքավորումները և պարագաները (242 տեղ / 1818 հատ /, 8,860 կգ ընդհանուր քաշով, 13,730, ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 5,987 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ, ցանկը կցվում է, «Արարատյան» ՄՎ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 13-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից 2016-2021 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-1469-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:
2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## Մասնացուցակ

242 տեղ /1818 հատ/, 8860 կգ. քաշով ,13730.00 ԱՄՆ դոլար արժեքով, իսկ ճանապարածախսը կազմում է 5987.00 ԱՄՆ դոլար

| N | Ապրանքի անվանումը | Տեղ | Հատ | Բրուտտո կգ | Արժեք ԱՄՆ դոլար | Արտադրման երկիր |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | հաշմանդամի սայլակ օգտ. | 14 | 14 | 377 | 1500.00 | Կանադա |
| 2 | հիվանդանոցային մետաղյա մահճակալ էլեկտրական կառավարմամբ /օգտ./ «Stryker» – model – 10154156-0 120v,60Hz,4A | 20 | 20 | 4245 | 2500.00 | ԱՄՆ |
| 3 | հիվանդանոցային մահճակալի գլուխներ /փայտե/ « Stryker» օգտ. | 15 | 34 | 339 | 300.00 | ԱՄՆ |
| 4 | ներքնակ հիվանդանոցային օգտ. | 24 | 24 | 589 | 1000.00 | ԱՄՆ |
| 5 | հաշմանդամի հենակ /костыль/ մետաղյա օգտ. | 58 | 58 | 145 | 420.00 | Չինաստան |
| 6 | հաշմանդամի ձեռնափայտ մետաղյա օգտ. | 11 | 11 | 16.8 | | Չինաստան |
| 7 | հաշմանդամի քայլակ մետաղյա օգտ. | 27 | 27 | 108 | 350.00 | Չինաստան |
| 8 | հիվանդանոցային պատգարակ օգտ. | 2 | 2 | 80 | 120.00 | ԱՄՆ |
| 9 | հիվանդանոցային պատգարակ էլեկտրական «Steris Hausted», օգտ. | 1 | 1 | 50 | 110.00 | ԱՄՆ |
| | «Dynatronics» օգտ. | 1 | 1 | 48 | 90.00 | |
| 10 | հաշմանդամի ամբարձիչ և ֆիքսող սարք «Invacare» model # 1065928 օգտ. | 1 | 1 | 70 | 100.00 | Չինաստան |
| 11 | հաշմանդամի ամբարձիչ և ֆիքսող սարք « Joents Healthcare» model # HML-400 օգտ. | 1 | 1 | 40 | 90.00 | Թայվան |
| 12 | հաշմանդամի մարզասարք /тренажер/«EasyStand»Alimate օգտ. | 1 | 1 | 37 | 60.00 | ԱՄՆ |
| 13 | վզքի մարզասարք «Soft Trac –TR-4500» 220 v. օգտ. | 1 | 1 | 159 | 800.00 | ԱՄՆ |
| 14 | ատամնաբուժական բազկաթոռ «Domain – Proma -8500» serial # PRO L 262310,120v,60Hz օգտ. | 1 | 1կոմպլ. | 150 | 713.00 | ԱՄՆ |
| 15 | ուլտրաձայնային հետազոտության սարք « ATL HDI 5000 Sono CT» 120v,60Hz,1.8A օգտ. | 1 | 1 կոմպլ. | 275 | 1250.00 | ԱՄՆ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 16 | բժշկական զննողական սեղան «Triton» model -TPE 24 120v,60Hz օգտ | 1 | 1 | 40 | 100.00 | ԱՄՆ |
| 17 | ձեռքերի /ergometer/ մարզասարք մետաղե սեղանով «Endorfin- 2911» օգտ. | 1 | 1 | 23 | 60.00 | ԱՄՆ |
| 18 | բժշկական զննման փայտե սեղան դերմոնտինե երեսով օգտ. | 2 | 2 | 60 | 125.00 | ԱՄՆ |
| 19 | գոտկատեղը ֆիքսող և ձգող գոտի իր պոմպով «Saunders» /lumbar traction/ serial #857968 օգտ. | | 1կոմպլ. | 8 | 50.00 | ԱՄՆ |
| 20 | վիրահատական լուսատու «Skytron» model # ST-23 144W,40Hz,4.8A օգտ. | | 1կոմպլ. | 68.7 | 750.00 | Ճապոնիա |
| 21 | էլեկտրական լուսատուներ մետաղյա ոտքերի վրա /շտատիվով/ օգտ. | 12 | 12 | 72 | 120.00 | Ճապոնիա |
| 22 | պլաստմասե սեղան մետաղյա ոտքերով օգտ. | 5 | 5 | 125 | 100.00 | ԱՄՆ |
| 23 | ատամնաբուժական գործիքների էլեկտրական ստերիլիզատորներ օգտ.՛ «Pelton & Grane» model # A3 36526 115v,1250 Watt, | 1 | 1 | 21.2 | 150.00 | ԱՄՆ |
| | «MDT Harvey» EM 5500 115v,60Hz,8AMPS | 1 | 1 | 21.1 | 150.00 | |
| 24 | Ասպիրատոր /ներծծման սարք/ «Gomco» Model # 3020,115v,60Hz,4A օգտ. | 1 | 1 | 15 | 180.00 | ԱՄՆ |
| 25 | բժշկական զննման սեղան դարակներով /էլեկտրական/ «Midmark» 115v,60Hz,5A օգտ. | 8 | 8 | 1250 | 800.00 | ԱՄՆ |
| 26 | տարա հեղուկի /բալլոն/ պլաստմասե 10լ օգտ. | | 1 | 4 | 5.00 | ԱՄՆ |
| 27 | բժշկական մետաղյա գործիքներ օգտ. | 18 | | 134.5 | 500.00 | ԱՄՆ |
| 28 | պոլիէթիլենի տոպրակներ | | 9 | 0.9 | 1.00 | Դոմինիկյան հանր. |
| 29 | Ներզարկերակային էլեկտր.գործիք ռետինե խողովակներով « Stryker» | | 9 կոմպլ. | 5.6 | 2.00 | ԱՄՆ |
| 30 | վիրաբուժական շեղբեր «DermaBlade» | | 100 | 1 | 30.00 | ԱՄՆ |
| 31 | վիզը ֆիքսող և ձգող գոտի իր պոմպով «Saunders» /cervical traction/ օգտ. | | 1 | 6 | 25.00 | ԱՄՆ |
| 32 | պլաստմասե տարա /դույլ/ | | 12 | 8.8 | 10.00 | ԱՄՆ |
| 33 | բժշկական սպասք մետաղյա օգտ. | 1 | | 40 | 20.00 | ԱՄՆ |
| 34 | շնչառական խողովակներ պլաստմասե «Portex» | | 40 կոմպլ. | 13.2 | 50.00 | Մեքսիկա |
| 35 | շնչառական խողովակներ պլաստմասե «Universal Flex-2» | 1 | 200 | 6.6 | 120.00 | ԱՄՆ |
| 36 | սրբիչ տեքստիլից | 1 | 200 | 10.6 | 70.00 | ԱՄՆ |
| 37 | հաշմանդամի գամակ /гамак/ տեքստիլից «Arjohuntleigh» | | 20 | 14.4 | 60.00 | Շվեդիա |
| 38 | խողովակ սիլիկոնե | | 66 կոմպլ | 8.8 | 30.00 | Չինաստան |
| | | | 23 կոմպլ. | 4.2 | 11.00 | Մեքսիկա |
| | | | 5 կոմպլ. | 1.1 | 2.00 | Գերմանիա |
| 39 | խողովակի պլաստմասե վարդակ /наконечник/ | | 31 | 4.5 | 12.00 | Չինաստան |
| 40 | ապակե տարա մետաղյա կափարիչով օգտ. | 1 | 15 | 10 | 10.00 | ԱՄՆ |
| 41 | ԷԿԳ սարքավորման թղթեր | 1 | | 11 | 5.00 | ԱՄՆ |
| 42 | հիվանդանոցային էլեկտր. մահճակալի կառավարման վահանակ և ձայնային ազդանշանի սարք «Posey» /sitter select quick start/ օգտ. | | 1 | 2 | 10.00 | Չինաստան |
| 43 | թևի ռետինե մանժետ | | 2 | 3 | 2.00 | ԱՄՆ |
| 44 | հեծանիվ մարզասարք «TD CT–C CA» օգտ | 1 | 1 | 6 | 60.00 | ԱՄՆ |
| 45 | գոտի կտորից | | 20 | 2.2 | 5.00 | ԱՄՆ |
| 46 | օրթոպեդիկ էլեկտր. ձեռքի շաղափիչներ' /дрель/ օգտ. | | 2 | 3 | | ԱՄՆ |
| | «Power Driver Lis EZ-I» model – 027818, | | | | 25.00 | |
| | «Power Driver Lis EZ-10,G3» model H58631 | | | | 15.00 | |
| 47 | բժշկական էլեկտր.ձգող սարք «Triton» model – MP-1120v,50-60Hz,1A օգտ. | | 1 | 16 | 50.00 | ԱՄՆ |
| 48 | վիրակապ թանզիֆե | 1 | 28 ռուլոն | 2.9 | 2.00 | ԱՄՆ |
| 49 | սպունգային վիրակապ 15*20 սմ | | 25 | 1.6 | 3.00 | ԱՄՆ |
| 50 | Տրանսֆորմատոր Seven Star ST–1500 U/D /input -110v,200v,220v,240v output -100v,110v,120v,220v,/ 1500W,13.6A | 2 | 7 | 65.5 | 250.00 | Չինաստան |
| 51 | ատամնաբուժական լամպ 3M,Unitek Ortholux XT model #704084 12v,75w | | 1 | 2.2 | 30.00 | ԱՄՆ |
| 52 | պոլիէթիլենի տոպրակներ | | 3 ռուլոն | 2 | 2.00 | Չինաստան |
| 53 | վիրահատական նշտար | | 35 | 0,8 | 10.00 | Հնդկաստան |
| 54 | վիրահատական նշտար | | 385 | 2.5 | 35.00 | ԱՄՆ |
| 55 | էլեկտրոդի գել «Sigma Gel» | | 7 | 1.8 | 5.00 | ԱՄՆ |
| 56 | կպչյուն ժապավեն «3M Steri-Strip» 6mm*10mm | | 50 | 2.4 | 5.00 | ԱՄՆ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 57 | ֆլոմաստեր | | 180 | 1.8 | 5.00 | ԱՄՆ |
| 58 | նեյրոստիմուլյացիայի էլեկտրոդներ՝<br><br>«Valu Trode»model CF5090 | | 80 | 1.1 | 18.00 | ԱՄՆ |
| | «EMS/2600» | | 12 | 0.2 | 2.00 | |
| 59 | կավե աման | 1 | 1 | 1.5 | 3.00 | Չինաստան |
| 60 | օրթոպեդիկ սարք /interpulse handpiece set/ «Stryker» | | 1 | 3.2 | 17.00 | ԱՄՆ |
| 61 | բժշկ.ուլտրամանուշակագույն լուսարձակ /UV Light Philips «Burton» model UV502 120v 0.17A,50/60Hz օգտ. | | 1 | 5 | 30.00 | ԱՄՆ |
| 62 | տեղային անզգայացման կարգավորող ուլտրաձայնային սարք /ultrasound stimulator/ «StartSound» model S/N M2004 115v,1.2A,60Hz օգտ. | 1 | 1 | 9.7 | 100.00 | ԱՄՆ |
| 63 | Շնչառական սարք «F&P ICON» /Auto CPAP/ s/# 160406534663 115v,60Hz,1.27A, | 1 | 1 | 4.3 | 50.00 | Նոր Զելանդիա |
| 64 | սպունգ | | 6 | 0.5 | 5.00 | ԱՄՆ |
| 65 | վիրահատական լուսարձակ «Garberiel» | 1 | 3 կոմպլ. | 1.6 | 40.00 | Չինաստան |
| | ընդամենը | 242 | 1818 | 8860 | 13730.00 | |

բեռը նվիրաբերվել է *Արարատյան Մաքսատուն –Վարչությունում*